№ 66 ՇԱԲԱԹ, 31 ՄԱՐՏԻ

1912

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 31 ՄԱՐՏԻ № 66

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը 85 կոպ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով պատիւ ունի յայտնել, որ վաղը՝ կիրակի, ապրիլի 1-ին, Վանքի մայր եկեղեցում կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ

ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆՑԻ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ։

202. 1—1

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈԲԵԱՆ ՔԱՄՈՅԵԱՆԸ իր զաւակներով խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր թանգագին և անմոռանալի ամուսնու, իսկ վերջիններն իրանց սիրելի մօր՝

ԵՂԻՍԱԲԷԹ ԲԱՂԴԱՆԵԱՆ ՔԱՄՈՅԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 27-ին կարճատև ու ծանր հիւանդութիւնից յետոյ։ Սմբիծքը կը կատարվի այսօր՝ շաբաթ, մարտի 31-ին ժամը 7-ին երեկոյեան։ Ցուղարկաւորութիւնը՝ կիրակի, ապրիլի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանից, Միքայէլեան փ. № 183, դէպի Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցին։ Թաղումը Վերայի գերեզմանատանը։

200. 2—2

Садъ „Лѣтній Театръ" (Михайловскій просп., 65, д. д-ра Карапетяна).

Վաղը, կիրակի, ապրիլի 1-ին

ՅՕԳՈՒՏ Ս. ՍԱՐԳՍԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ կը կայանայ

Առաջին գարնանային ԶԲՕՍԱՆՔ

ԾՐԱԳԻՐ

Մանկական թափոր դրօշակներով, մանկական խաղեր (երեխաները մուտքի մօտ ստանում են ձրի դրօշակներ), աւտոմատիկ հաւ, պտի-շվօ, տումբօչկա, ամերիկական վաճառք, զատկական ձուեր նուէրներով, բաղդի անիւ, նշանազարկ, չինական բիլիարդ, օղակախաղ, գուշակող կին, կօնֆէտտի, բուֆէտ։

Զինուորական երկու նուագախումբ։ Բեմի վրա կը նուագէ մանդոլինիստների խումբը։

ԳԻՆԵՐ

Մուտքը մեծերի համար 30 կոպէկ, փոքրերի՝ 15 կոպէկ։
Մարտի 26-ի համար վերցված տոմսերը պահպանում են իրանց ոյժը այս զբօսանքին։
Սկիզբը ցերեկվայ ժամը ճիշդ 4-ին։ (առ.) 207. 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ „ԱՐՕՐ"

Ամսագրի № 2-ի (փետրվար)

1) ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄՕՏ		Գեղունի
2) ՄՆԱ՜Ս ԻՄ ՄՈՒԶԱՆ (բանաստ.) Նադսօնի,	Թարգմ.	Կ. Կրասիլնիկեանի
3) ՈՒՐԻՇ ՃԱՐ ՉԸ ԿԱՅ		Լ. Գ. Աթաբէկեանի
4) ՁՄԵՌ (բանաստ.)		Էմ. Օսի
5) ՀՐԵՇՏԱԿԸ		Ստ. Ռօֆֆօրի
6) *** (բանաստ.) Ապոլլօն Կօրինֆսկիյի	Թարգմ.	Լևոն Գրիգորեանցի
7) ԳԵՐՄԱՆԱՑԻՆ, Շալոմ-Ալէյխեմի	»	Էլ-Դայի
8) ԱՉՔԸ, Էդգար Պօէի.	»	Ս. Տ.-Ամր.-ի
9) *** (բանաստ.), Պեօտր Եակուբովիչի	»	Դ. Նորեկի
10) ԻՄ ՕՐԸ, Պ. Ա. Իվաշևվայի.	»	Վաղ. Թումանեանի
11) ՍԱՀՆԱԿԸ (բանաստ.).		Մ. Բէջանեանի
12) ՕՍՄ. ՀԱՅԵՐԻ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՀԱՅԿ. ԽՆԴԻՐԸ.		Սարուխանի
13) ԻՆՉ Է ՏԵԽՆԻԿԱՆ.		Յ. Զախմախչեանի
14) STANCES (բանաստ.).		Ս. Յովհաննիսեանի
15) ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ.		Շաւարշի
16) ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ.		Միք. Նաթանեանի
17) ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ.		Կալխասի
18) ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ.		Սուրխաթեանի
19) ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.		
20) ՅԱՒԵԼՈՒԱԾ. Պատմութիւն Հայոց կամ Հայաստան		Հ. Առաքելեանի

2—1

Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնը յայտարարում է, որ հանգուցեալ Ա. Ղուկասեանի կտակած գումարի տոկոսով պիտի ուղարկվի արտասահման հայկական և աստուածաբանական գիտութիւնների մէջ կատարելագործվելու համար մի հայ լուսաւորչական հոգևորական կամ հոգևոր կոչումն ընդունող անձ, որ «խոստանում է ծառայել հայ եկեղեցուն և ժողովրդին», Կովկասեան շրջանում, Թիւրքիայում կամ Պարսկաստանում։

ա) Ցանկացողները, համաձայն կտակի, աւարտած պէտք է լինեն Գէորգեան Հոգևոր Ճեմարանի դասընթացքը։

բ) Խնդրագրի հետ պէտք է ներկայացնեն իրանց աւարտման մրցագրի վաւերացրած պատճէնը։

գ) Ճեմարանի Մանկավարժական Խորհուրդը նախապատուութիւն կը տայ աստուածաբանութիւն, պատմութիւն, լեզուագիտութիւն, գրականութիւն, երաժշտութիւն և իրաւաբանութիւն (մասնագիտօրէն եկեղեցական իրաւունք) ուսումնասիրել ցանկացողներին։

դ) Որոշված է տարեկան տալ 800 րուբլի։

ե) Մինչև առաջիկայ մայիսի 20-ը Ճեմարանի Վարչութեան հասած խնդիրները միայն քննութեան կառնվեն։

Տեսուչ Ճեմարանի՝ Բագրատ վարդապետ

(օ.մ.) առ. 191. 3—3

ՆՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԱՋ

I

Նշանաւոր է և խոր ուշադրութեան արժանի այն րօպէն, որ անցնում է պետութիւնը ներկայ տարում։

Պարլամենտը Ռուսաստանում ունեցաւ լիակատար մի շրջան։ Դա յիշատակելի մի երևոյթ է։

Երրորդ Պետական Դուման, չը նայելով զանազան [illegible] չը փակվեց, չը կրճատվեց, և հանդիսացաւ իբրև մի պետական հաստատութիւն, որ արդէն անցաւ գոյութեան մի աստիճան։

Այժմ հերթական ամենակարևոր հարցը Ռուսաստանում, որ զբաղեցնում է ազգաբնակութեան ընդարձակ խաւերը, նոր ընտրութիւնների, նոր Պետական Դումա կազմելու խնդիրն է։

Ի՞նչ կազմ կունենայ յաջորդ Դուման, ինչով երրորդ Դուման կը զանազանվի չորրորդ Դումայից, արդեօք ինչ յարաբերութեան մէջ կը լինեն աջակողմեան, չափաւոր, ազատամիտ և ծայրայեղ տարրերը միմեանց վերաբերութեամբ, ինչ տրամադրութիւններ ունի ռուս ընտրող ժողովուրդը դէպի Դումայի գործունէութիւնը և դէպի կառավարութեան գործելակերպը—ահա մի շարք խնդիրներ, որոնք զանազան մեկնութիւնների և խօսակցութիւնների առարկաներ են դարձել պետութեան զանազան խաւերում։

Ոչ ոք այժմեանից չէ կարող ասել թէ ինչ կը լինի չորրորդ Դուման։ Հասարակութեան տրամադրութիւնը միատեսակ չէ արտայայտված զանազան տեղերում և հասարակական կարծիքը չէ գտել արտայայտութեան այնպիսի աջող և հարազատ արտայայտութիւններ, որ հնարաւորութիւն լինէր մերձաւորապէս գուշակութիւններ անել։

Որ Ռուսաստանը դեռ արմատական բարենորոգումներ չէ ստացել և ուրեմն կարիք ունի վերանորոգչական գործունէութեան—դա անկասկած է։ Որ պետութեան մէջ ապրող ժողովրդական խաւերը սպասում են հոկտեմբերի 17-ի մանիֆեստի թելադրած բարենորոգումները—դա բնական է և տրամաբանական։ Բայց նոր Ռուսաստանի առաջ հանդէս է եկել մի բարդ և պատասխանատու հարց, թէ ո՞ւմ նա կարող է վստահել իր օրէնսդրական բարւոքման հոգատարութիւնը և ինչ կազմ կը ցանկանար տալ այն պատգամաւորական մարմնին, որ պէտք է ներկայացնէ ժողովրդական տրամադրութիւնը, կամքը և տենչանքները։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

29 մարտի

Պետերբուրգ.— Արտաքին գործերի մինիստրութիւնից տեղեկացնում են, համաձայն առևտրական նաւագնացութեան բաժնի ստացած հաղորդագրութեան, թէ իտալական նաւատորմը գրաւելու է ապրիլի 8-ին Բագիլից մինչև Լօյէի հիւսիսը ընկած տարածութիւնը։ Ուխտաւորներ տանող նաւերը կարող են մտնել հարաւային ափին գրաւող նաւերի հսկողութեամբ։

Լօնդօն.—Ասկվիտը համայնքների պալատին ներկայացրեց օրինագիծ հօմրուլի մասին։ Իր ճառում Ասկվիտը յայտնում է, որ հօմրուլը ներկայանում է առաջին քայլը պետական պարլամենտը տեղական հարցերով զբաղվելու անհրաժեշտութիւնից ազատվելու գործում։ Իրլանդական պարլամենտը կը բաղկանայ սենատից և ստորին պալատից։ Սենատի կազմը լինելու է 40 անդամ, որոնք սկզբում կը նշանակվեն պետական կառավարութիւնից, իսկ յետոյ նշանակվելու են իրլանդական գործադիր իշխանութիւնից։ Ստորին պալատը բաղկանալու է 164 անդամից։ Որևէ խնդրի վերաբերմամբ տարաձայնութիւն ծագելու դէպքում երկու պալատները պէտք է միասին խորհրդակցեն և քուէարկեն։

Մօբիլ (Ալաբամա նահանգ).—Այստեղ եկած ապրանքատար շոգենաւի կապիտանը պատմեց, որ Պանամայում Զիրիկի հրաբուխը մարտի 23-ին արտավիժելով կործանել է հնդկական շատ գիւղեր։ Հազարաւոր տեղացիներ զոհվել են։

Հռոմ.—Ստեֆանիի գործակալութիւնը հերքում է արտասահմանում տարածված լուրերը պապի մահվան մասին։

Կոպէնհագէն.—Թագաւորական զոյգը զաւակների հետ մեկնեց Նիցցա։

Մադրիդ.—Արտաքին գործերի մինիստրը ֆրանսիական դեսպանին յանձնեց Սպանիայի պատասխանը վերջին ֆրանսիական նօտային։

Ուջդա.— Փոխ-գնդապետ Ֆէրօյի հետախուզող զօրամասը Մախրիջում յետ մղեց 2500 բերբերների յարձակումը, որոնք մեծ կորուստներ ունեցան։ Ֆրանսիացիները կորցրին մօտ 20 սպանված և 63 վիրաւորներ, որոնցից 3-ը օֆիցերներ են։

Պարիզ.—«Մատէն» լրագիրը կազմակերպեց թռիչք Պարիզից Պէկին և նշանակեց մրցանակ 155,000 ֆրանկ։ Թռիչքը կատարվելու է այս տարվայ օգոստոսին հետևեալ մօտաւոր մարշրուտով. Պէկին-Խարբին-Իրկուտսկ-Մոսկվա-Վարշավա-Վիէննա-Տրիէստ-Վենետիկ-Մարսէլ-Պարիզ։

Բելգրադ.—Բելգրադի ուսանողները մտադիր են դիմել ժողովրդին մի կոչով՝ բօյկօտ յայտարարելու ունգարական ապրանքներին Խորվաթիայում կատարվող ճնշումների առիթով։ Տեղական առևտրականները համաձայնութիւն յայտնեցին մտնել բօյկօտը ղեկավարող կօմիտէտի մէջ։

Պրագա.—Ժուռնալիստների համասլաւօնական միութեան կօմիտէտը համակրանք յայտնեց խորվաթական մամուլին, որի գոյութիւնը ենթարկված է վտանգի նախկին ցենզուրա մտցնելով։

Բուխարէստ.—Կազմակերպվեց նոր կաբինէտ։ Մինիստր-նախագահ և արտաքին գործերի մինիստր՝ Մայօրեսկու, զինուորական՝ գեներալ Արգենտայեան, ֆինանսների՝ Ռօզէտտի, ներքին գործերի ու լուսաւորութեան՝ Արիօն, հասարակական աշխատանքների՝ Պանգրատի. Մնացածները նախկիններն են։ Կաբինէտը համարվում է ժամանակաւոր։

Զագրեբ.—Աւստրօէրների «Նէյէս-Վինէր-Տագէբլատ» թերթի աշխատակից աւստրիացի Բէրգօտէյնը արտաքսվեց Խորվաթիայից երեք տարով։ Արտաքսվելու են նաև ոչ-խորվատ բոլոր դիմադիր ժուռնալիստները։

Կորֆու.—Պետական կանցլէր Բէտման-Հօլվէգը մեկնեց։

Էսսըլին.—Դերձակները աշխատանքները վերսկսեցին միամսեայ գործադուլից յետոյ, որի պատճառած վնասը հաւասարվում է 4 միլիօնի։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

29 մարտի

Պետերբուրգ.— Տեղեկատու Բիւրօն հաղորդում է. «Веч. Вр.» լրագրի այսօրվայ համարում Բերլինից, «Ցէյտ» լրագրի խօսքերից վերցրած հեռագրի մէջ, յայտնված է՝ թէ արտասահմանում լուրեր են տարածված այն մասին, իբր միջադէպ է սպասվում Թիւրքիայի և Ռուսաստանի միջև, իբր եռանդուն պատերազմական պատրաստութիւններ են տեսնվում երկուստեք և իբր յատկապէս այդ առիթով համաձայնութիւն գոյութիւն ունի Ռուսաստանի և Իտալիայի միջև։ Յիշեալ լուրերը միանգամայն մտացածին են, բոլորովին անհիմն»։

Կ. Պօլիս.—Սկսվեցին պատուիրակների ընտրութիւնները։ Մայրաքաղաքի երկու շրջաններում յոյները հրաժարվեցին մասնակցել, բողոքելով անկանոնութիւնների դէմ։

Բելգրադ.—Թիւրքաց դեսպանը արտաքին գործերի մինիստրին յանձնեց բողոքի նօտա՝ Մակեդօնիայում սերբիական հրոսակախմբեր երևալու դէմ։ Կառավարական շրջաններից բղխող տեղեկութիւնների համաձայն, մինիստրը պատասխանել է, թէ կառավարութիւնը և պաշտօնական շրջանները ոչինչ կապ չունեն Սերբիայից դուրս կազմակերպվող հրոսակախմբերի ծագման հետ, ուստի և կառավարութիւնը պատասխանատու չէ Թիւրքաբնակ իր հայրենակիցների գործողութիւնների համար։ Միւս կողմից պէտք է գիտենալ, որ յիշեալ սերբերի դրութիւնը շատ ծանր է։

Լօնդօն.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ փոխ-ծովակալ Լիմպուսը նշանակվում է Թիւրքաց կառավարութեան ծովային խորհրդատու։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

29 մարտի

Խոյ.—Քիւրդերի պարագլուխ Բիլբաշի Բախշ-աղան, որ 3 տարի առաջ Թիւրքերից փախչելի ապաստան և շքանշան ստացաւ, արգելք եղաւ ազգաբնակութեան վիճակագրութեան։ Նրա դէմ Սուլդուզից Թիւրքերը ուղարկել են մի զօրամաս 2 թնդանօթներով։

Ջաւիր-փաշան պաշտօնական այցելութիւն գործեց ռուսաց փոխ-հիւպատոսին, յետոյ այցելեց ռուսական զօրամասի հրամանատար գեներալ Վօրօպանօվին։ Նա փոխ-հիւպատոսին յայտնեց, որ եկել է միմիայն մեր զօրքերի պետի հետ ծանօթանալու և նրա հետ բարեկամական յարաբերութիւն կապելու նպատակով, և իրան բաղդաւոր է համարում պարզել այն թիւրիմացութիւնները, որոնք ծագել են Պարսկաստանին մօտ սահմանի վրա և անվստահութիւն են ստեղծել առ Թիւրքիան Ռուսաստանի կողմից։ Թիւրքիան թշնամական մտորումներ չունի իր հզօր հարևանի վերաբերմամբ. Թիւրքիայի ձեռք առած զինուորական միջոցների նուազութիւնը ապացուցանում է այդ՝ ցայտուն կերպով։

Խոյ.—Հիւսիս-արևմտեան Ատրպատականի ռուս զօրքերի կառավարիչ գեներալ Վօրօպանօվը մի 100-եակ կօզակների առաջ շնորհաւորեց այն 9 կօզակներին, որոնք անցեալ տարի քիւրդերի հետ հրացանաձգութիւն ունենալու համար Բարձրագոյնս պարգևատրվում են Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 մարտի

Պէկին.—Կաբինէտը, իր նոր անդամների գալուստից յետոյ, մնալու է Նանեանում, Պէկինից 10 վերստ հեռաւորութեան վրա, և կը մնայ այնտեղ մի ամիս, յետոյ կը փոխադրվի մայրաքաղաք։ Կաբինէտի անդամներին ուղեկցելու է հարաւային զօրքերից մի զօրամաս։ Լուրերի համաձայն, նախագահը պնդում է, որպէսզի զօրամասի թիւը 1000 զինուորից աւելի չը լինի. հարաւայինները պահանջում են ուղարկել մեծ թիւ։ Այդ առիթով կատարվող բանակցութիւնները խոչընդոտ են լինում կաբինէտի անդամներին մեկնել հիւսիս։

Կուլջա.—Մօնղօլները անջատվեցին հանրապետականներից և իրանց ոյժերը կենտրոնացրին Տիկէսում։

Չինացիների ուղարկած հետախուզիչ զինուորներից վերադարձան միայն 8 հոգի. Մնացածները սպանվել են։ Կառավարութիւնը փորձեց վերադարձնել մօնղօլներին խաղաղ ճանապարհով. անյաջողութեան դէպքում նա կուղարկէ զինուորական ոյժ։

Ռուսական առևտրին մօնղօլները խոստանում են լիակատար ապահովութիւն։

Մուկդէն.—78-րդ հետևակ գունդը մտաւ Ջժուվուսիան՝ խունխուզների դէմ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐԻՑ

VI

Վերջապէս

Անցեալ անգամ («Մշակ» № 38) գրել էի գրականութիւնը պրօֆէսիա դարձնելու մասին, այսինքն գրողներին միջոց, հնարաւորութիւն տալու, որ նրանք զբաղվեն միայն և միայն գրականութեամբ, իրանց մտածումները, ամբողջ ուղեղը կենտրօնացնեն այդ բանին և ոչ կեանքի առօրեայ հոգսերին բաւարարութիւն տալու համար։

Եւ ահա դէպքը, բոլէն ինքն իր ոտքով եկել-ծեծում է մեր դուռը՝ ասելով. «Օգտվեցէք ինձնից և իրականացրէք ձեր վաղուցվայ բուռն ցանկութիւնը»։

Եւ մենք չը պէտք է ձեռքներս ծալած նստենք, օդ կուլ տանք, այլ պէտք է ընդառաջենք և օգտվենք յարմար առիթից։

Այդ առիթը տպագրութեան 400-ամեայ յօբելեանն է։

Մի կողմ թողած գիտական հետազօտութիւնների խորքը մտնելը՝ 400-ամեակի լրանալու տարին 1912 թէ 1913 թ. լինելը, կը կամենայինք մի երկու խօսք ասել։

Հայ գրողի դառն, խղճուկ, անմխիթար, անտանելի վիճակը, նրա քաղցած լինելը պարզ յայտնի է իւրաքանչիւր գրագէտ մարդու և նրա դրութեան բարելաւման վրա մտածելու պարտքն էլ պատկանում է նոյն այդ գրագէտ մարդկանց, որոնց համար այնքանը պարզ պէտք է լինի, որ բարելաւ վիճակի, ապահով դրութեան մէջ լինելով գրողը, բարելաւ վիճակ էլ կունենայ գրական շուկան, ուղեղին, հոգուն աւելի հարուստ նիւթեր մատակարարող, և ընտիր գրքեր կունենանք մենք, սկսած վէպերից, բանաստեղծութիւններից մինչև գիտական ամեն տեսակի աշխատութիւնները, որքան էլ բարդ լինեն նրանք։

Որոշվում է տօնել տպագրութեան բազմամեայ տօնը, բայց ինչ է այդ, եթէ ոչ մտաւոր շուկայի տօնը, վէպի, բանաստեղծութեան և այլ տեսակի աշխատութիւնների տօնը. բայց մի՞թէ տօնելով դրանց տօնը մենք նորից պէտք է զանցառութեան տանք դրանց մարգարէներին. չէ՞ որ եթէ չը լինէին այդ մարդիկ, գրողները, նշանակում է՝ տպագրութիւնը եղած-չեղած բոլորը մէկ է ու անօգուտ։

Եւ որովհետև այդ այդպէս է, ուրեմն հէնց այդ տօնից կարելի է օգտվել և ապահովել գրողներին։

Ապահովել բոլորովին, ի հարկէ, մի անգամից շատ ու շատ դժուար է և նոյն իսկ անիրագործելի, բայց հօ գոնէ որոշ չափով կարելի է թեթևացնել, դիւրացնել նրանց նեղ դրութիւնը։

Ժողովրդի գլուխը անցած՝ նրանց աչքերը ձեզ վրա գամած, դուք մտքի և ոյժի տէր առաջնորդներ, ձեզ վրա է ընկնում գրողին ազատ միջոցներ, լայն ասպարէզ տալու պարտքը։

Ու տուէք այդ, դուք պարտաւոր էք, այդ ձեր սրբութիւն-սրբոցն է, տուէք այդ։

Ցարմար բոլէն ձեր դուռն է ծեծում, օգտվեցէք։

400-ամեակի յօբելեանական տօնախմբութեան առիթով գուցէ և շատ հաւանական է բաւական խոշոր նիւթական օժանդակութիւն լինի. և ահա այդ ժողովված փողը պէտք է անպայմանօրէն յատկացնել գրական ֆօնդին, այսինքն կազմակերպել մի ընկերութիւն, որի նպատակը և ցանկութիւնը լինի բարելաւել գրողների անտանելի վիճակը։

Հիմնել այդպիսի մի ընկերութիւն. բայց հէնց սկզբից հարց է առաջանում, թէ ինչպիսին է լինելու. արդեօք այդ նոր ընկերութիւնն էլ պէտք է նման լինի մեր շատ սունկի նման բուսնող ընկերութիւններին, որոնք եթէ ոչ վնաս, գոնէ որևէ շօշափելի արդիւնք էլ չեն տալիս և, ըստ առածի ասելով, որոնց «անունը կայ, ամանումը չը կայ»։

Եթէ այո, եթէ նա լինելու է անունով միայն, աչքեր թող փչելու համար, այդ դէպքում աւելի լաւ է բոլորովին գոյութիւն էլ չառնէ, որ գրողը գտնվելով դարձեալ իր ներկայ վիճակում, ոչ մի տեղի վրա յոյս չունենայ, փոխանակ գոյութիւն առնէ ու դառնայ նեղ անհատական, կուսակցական, թայֆայական, ինտրիգական և այլ կրքերի կենտրօն։

Եկել է ժամանակը, հանդիսացել է յարմար առիթը, որից անպայման պէտք է օգտվել։

Վերջապէս, այո, վերջապէս տարիների յոյսերը իրականութեան պիտի վերածվեն, բայց գործը այնպէս ու այն ձևով դասաւորենք, որ այլևս կարիք չը զգանք մեր «յետին խելքին»։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

Ներքին-Ագուլիս

ՏՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Հարցը լուծված

Գանձակ, 21 մարտի

Ինչպէս անցեալ անգամ ասել էի, ամսիս 20-ի երեկոյեան ժամը 8-ին վերջնականապէս պիտի որոշվէր Ժամհարեան գիւղատնտեսական դպրոցի Գանձակում բացվելու հարցը։

Որոշեալ ժամին դպրոցի դահլիճն եմ մտնում և չեմ հաւատում աչքերիս. գանձակեցի գիտակից հասարակութիւնը՝ յանձինս բազմաթիւ այլևայլ բարելաւված պարագամանց տէր անձանց գտնում եմ այնտեղ։ Նոյնիսկ մեր խորթացած բարձրագոյն կրթութիւն ստացած ինտելիգենցիան չէր զլացել ուղարկել մի քանի ներկայացուցիչ։ Կային ի հարկէ ուսուցիչներից էլ մի քանի հոգի։

Ահա այսպիսի մի ընտրեալ հասարակութեան ներկայութեամբ փոխանորդ Լևոն վարդապետը բացեց նիստը, որից յետոյ զանազան ճառեր արտասանվեցին։

Ինչպէս երևում է, ոգևորութիւն կար, և անցեալ անգամվայ ժողովականները բարեխղճօրէն էին կատարել իրանց վրա դրված պարտականութիւնը՝ դահլիճ բերելով մեր ականաւոր գործիչներից շատերին։ Միաձայն (յոյժ հազուադէպ երևոյթ մեր ծխական ժողովներում) որոշվեց ցանկալի ընդունել գիւղատնտեսական դպրոցի Գանձակում բացվելը (մանաւանդ այդ բանին օժանդակեց ծխական դպրոցի ուսուցիչներից մէկի արտասանած զգացված ճառը), ուստի և յատկացնել այդ նպատակի համար մինչև 200 դեսեատին «Արափլու» կոչված եկեղեցապատկան հողերից, հաշւելով իւրաքանչիւր դեսեատինը 100 րուբլով։ Մի մեծ զիջողութիւն, որ արին գանձակեցիք գնահատելով հողը համարեա չորս անգամ քիչ՝ ի նկատի ունենալով դպրոցի մեծ նշանակութիւնը։ Այդ որոշումը իսկոյն հեռագրով յայտնվեց Մօսկվա Ալ. Քալանթարին։

Այսպիսով Գանձակը կատարեց այն, ինչ որ հնարաւոր էր։ Մնացեալը Ժամհարեանները և Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան ներկայացուցիչները պէտք է աշխատեն իրագործել, ի նկատի առնելով գանձակեցոց առաջարկած հողի կլիմայական և քիմիական նպաստաւոր հանգամանքները, հայ գիւղերին, ինչպէս և երկաթուղուն ու նահանգական քաղաքին մօտ լինելը և այլն։

Սիրենք յուսալ։ Խոջէթ

—

Փորձնական դասեր

Ջալալ-Օղլի, 23 մարտի

Կիրակի, ամսիս 18-ի երեկոյեան, տեղիս ծխ. դպրոցում, ներկայութեամբ թեմական տեսչի և թւով 13 ուսուցիչ-ուսուցչուհիների, փորձնական դասերի առիթով կայացաւ ժողով։ Ժողովը նախագահ ընտրեց տեսչին, իսկ քարտուղարներ ամեն մի առարկայի համար առանձին-առանձին անհատներ։

Մարտի 21-ին ժամը 10-ից կատարվեցին կազմած արձանագրութիւնները, մտցնելով նրանց մէջ մի քանի ուղղումներ. առաջարկվեց ժողոված ուսուցչութեանը ստորագրել, որից յետոյ ժողոված ուսուցիչների բուռն ցանկութեամբ ուղարկվեց հեռագիր հանգուցեալ Գ. Սունդուկեանի այրի տիկ. Սօֆիային, որի բովանդակութիւնը հետևեալն է. «Լոռու հայոց ծխ. դպրոցների ուսուցչութիւնը սրտի ցաւօք ստացաւ մահվան ծանր լուրը մեր տաղանդաւոր դրամատուրգի։ Մտաւոր սերունդի դաստիարակները ափսոսում են անփոխարինելի կորուստը, յանձին մեր հասարակութեան դաստիարակին»։

Ամսիս 21-ին տեսուչը փորձնական դասերը վերջացած համարելով՝ ընդհանուր փորձնական դասերի առիթով յայտնեց գոհունակութիւն և հէնց նոյն օրը ժողոված՝ շրջակայ գիւղերի ծխ. դպրոցների ուսուցիչները ցրվեցին։ Կայծօն Շքեղեան

—

Լաւ ցանքեր եւ վատ բարքեր

Կուսապատ, 19 մարտի

Մեր գաւառում կատարեալ գարուն է։ Գիւղացիք արդէն սկսել են գարնանացանը, վարում են գլխաւորապէս կտաւհատ և կորեկ, որոնք արդէն կանաչել են. շուտով կը սկսեն բամբակի ցանքերը։ Շատ լաւ ապագայ է խոստանում աշնանացանը, եթէ գարնանային պատուհասներից ազատ մնայ. արդէն լաւ կանաչել են արտերը և բաւականին բարձրացել են։

Գողութիւնները և հրդեհաձգութիւնները քանի գնում՝ շատանում են. վերջերս դարձեալ կրակի մատնեցին Հօռաթաղում մի մարագ՝ դարմանով լիքը, որը բոլորովին այրվեց։ Մարդակերտում անցեալ գիշերը նոյնպէս վառեցին մի մարագ, բայց բարեբաղդաբար շուտ օգնութեան հասան և մարեցին հրդեհը։ Իսկ չարագործները դարձեալ ազատ մնացին պատժից։ Լուսաող

—

Ռէալական դպրոցի հարցը Ախալքալաքում

Ախալքալաք, 18 մարտի

Անդրկովկասեան երկրում, առաւել ևս Ախալքալաքում, ուսման մեծ կարիք է զգացվում։ Ճիշդ է, թէև ունենք արական և իգական մի-մի գիմնազիա, մասնաւոր երկու պրօգիմնազիա, քաղաքային դպրոց և ծխ. դպրոց, բայց սրանք երբէք չեն կարողանում գոհացում տալ տեղիս ազգաբնակութեան մտաւոր սերնդին, որովհետև տարէցտարի աւելանում է ազգաբնակութիւնը և այդ պատճառով շատերի երեխաները մնում են ուսումնարանի դրան յետքում կանգնած։

Դեռ անցեալ սեպտեմբեր ամսում հասարակութեան անդամների մէջ մի բարի միտք է յղացել, որ հասարակութեան հաշւով և կառավարութեան թոյլտուութեամբ ունենանք մի հատ ռէալական դպրոց։

Այս համեստ գործի գլուխ է կանգնած ինժեներ Սարգիսբէգեանը, որի աշխատութեամբ և եռանդուն աջակցութեամբ այսօր բազմամարդ ժողով էր հրաւիրել, որ ներկայ էին պաշտօնական անձինք, վաճառականներ՝ հայ, ռուս, հրեայ և թուրք։

Ինժեներ Սարգիսբէգեանը համառօտ և ազդու կերպով բացատրեց ժողովականներին տեղիս ուսումնարանների դրութիւնը, առաջարկելով խնդրել կառավարութիւնից, որ հասարակութեան հաշւով բացվի մի հատ ռէալական դպրոց։ «Եթէ առաջին տարին,—ասաց Սարգիսբէգեանը,—ունենանք միայն երեք դասատուն, հարկաւոր է մեզ 13,500 ր., որից 11,000-ը ստացվում է թօշակադրամից, իսկ մնացեալ 2500 ր. պիտի հասարակութիւնը վճարէ, և այսպիսով իւրաքանչիւր տարի մի-մի դասատուն աւելացնել»։ Չը պիտի մոռանանք, որ հասարակութիւնը պիտի ապահովացնի ուսումնարանի դրութիւնը կանխիկ դրամով՝ մտցնելով 20-ից 25 հազար րուբ. պետական գանձարանը, իսկ նրանից յետոյ դիմէ կառավարութեան։

Այդ հարցի առիթով բաղդ է ունեցել պարոնը պատշաճաւոր իշխանութեան հետ մասնաւոր խօսակցութիւն ունենալ, որոնք սիրալիր կերպով խոստացել են աջակցել. ուստի առիթից օգտվելու համար, քանի որ թարմ է այս հարցը, պէտք է շուտափոյթ իրականացնել դպրոցի բացումը։ Սարգիսբէգեանը դիմեց ժողովականներին ընտրել մի նախագահ և սկսել այս հարցով զբաղվել։

Նախագահ ընտրվեց միաձայն գնդապետ Անտիպինը. թէև սա սկզբում մերժեց, որ գործի հետ անծանօթ է, բայց Սարգիսբէգեանն ասաց, թէ կարող է օգնական լինել նրան և հարկաւոր տեղեկութիւններ տալ. ժողովը միաձայն ընդունեց։

Նախագահ գնդապետ Անտիպինը նախ շնորհակալութիւն յայտնեց ժողովականներին և յետոյ սկսեց օրվայ հարցով զբաղվել։

Նախագահը սկսեց շատ սիրալիր կերպով բացատրել ժողովականներին ուսման նշանակութիւնը և խրախուսեց՝ որ որքան կարելի է պիտի աշխատել առիթից օգտվել, որովհետև ամսիս 26-ին Ախալքալաք է ժամանելու Թուրքեստանի գեներալ-նահանգապետ Սամսօնովը։

Մեզ հարկաւոր է երկու խնդիրք ներկայացնել. առաջին խնդիրքում խնդրել, նկարագրել, որ եթէ կարելի է պետական հաշւով ռէալական դպրոց բանալ, իսկ երկրորդ խնդիրքում յիշել, որ թոյլտուութիւն տալ հասարակութեանը գոնէ իրան հաշւով ռէալական ուսումնարան ունենալ. ուստի այս մասին հարկաւոր է ժողովականներից ընտրել 5—6 հոգի, որ խորհրդակցեն այս հարցի մասին և խնդիրները ներկայացնեն։

Միաձայն ընտրվեցին՝ գնդապետ Անտիպին, Սարգիսբէգեան, Մովսէսեան, Տէրտէրեան, Զալգին և Կրուգլով. այս ընտրութիւնից յետոյ նախագահն յայտարարեց ժողովականներին՝ որ ազատ են, իսկ ընտրված անձնաւորութիւնները կարող են մնալ խորհրդակցելու։ Ժողովականներն բուռն ծափահարութեամբ և ուրախ սրտով հեռացան դահլիճից։ Հետևեալ ժողովի մասին կը յայտնեմ ժամանակին։

Միք. Գանջեցեան

—

Չարջույի հայ գաղութի ընթացիկ կեանքից

Չարջույ, 12 մարտի

Երեկ հողին յանձնվեց քաղաքիս պատւաւոր վաճառական Մարտիրոս Դանիէլեանցի հանգուցեալ կնոջ մարմինը։ Հանգուցեալի յիշատակը յարգելու համար, Դանիէլեանը տեղիս դպրոցին նուիրեց 100 ր., իսկ իր հայրենի գիւղին 50 ր.։ Չարջույի հասարակութիւնը երկսեռ խուռն բազմութեամբ եկել էր իր ներկայութեամբ յարգելու հանգուցեալի յիշատակը. յարգողների մէջ կային և օտար հարևաններ։

Մեռելահացի ժամանակ Բախշի Հայրապետեանցը և Աթանէս Արզումանեանցը խնդրեցին ինձ տանտիրոջ թոյլտուութեամբ առաջարկութիւն անել ներկայ հասարակութեանը, որ տեղն ու տեղը նուիրաբերութիւն լինի յօգուտ տեղիս հայոց գերեզմանատան և գոյացած փողով պարսպապատել գերեզմանատունը, որն ամեն կողմից բաց է և ոտի կոխան է դառնում։ Առաջարկութիւնը սիրով ընդունվեց և ստորագրվեց 150 րուբլուց աւել մի գումար, որը դեռ էլի կաւելանայ, երբ դուրսը մնացած անդամներն էլ ստորագրեն։

Չարջույի ծխական դպրոցը ինչ-ինչ պատճառներով փակ է այս ուսումնական տարում։ Դպրոցի մասին խօսք լինելուց միշտ շեշտվում էր, որ ամենքս անխտիր ցաւում են այդ հանգամանքի վրա։ Այժմ դպրոցի անունով կայ 260 րուբլի և միայն հարկաւոր է մի ազդակ, որ մայրենի լեզուի որբանի դռները փակ չը մնան հայ մանուկների առաջ։ Ամենքն սպասում են նոր քահանայի ընտրութեան, որ նա գայ և դպրոցը վերաբացէ։ Արշակ Ք. Տէր-Ոսկանեան

ԾՈՎ ԿԱՐԻՔԻ ԴԻՄԱՑ

—

Նոր-Բայազետ, 22 մարտի

Չեմ կարծում, թէ Անդրկովկասում լինի մի այնպիսի անկիւն, ուր չքաւորների ու թշուառների թիւը այնքան մեծ լինի, որքան մեզանում... շատ ընտանիքներ այնպիսի դժնդակ կացութեան մէջ են գտնվում, որ մարդու միտքը քարանում է նրանց ընտանեկան դրութեան առաջ, մազերը բիզ-բիզ կանգնում... Նրանք, այդ թշուառները, օրվայ հացի կարօտ՝ լալիս են իրանց սև բաղդը, քանի որ նրանց ապրուստի բոլոր միջոցները փակված են նրանց առաջ, իսկ բնութիւնը տարիներից ի վեր արդէն երես է դարձրել նրանցից, որովհետև նրանք ցանում են՝ ոչինչ չեն ստանում, աշխատում են՝ ոչինչ չեն շահում, թող թէ շատերի համար սեփական ցանքեր ունենալը երազ պէտք է համարել...

Եւ այդպէս՝ երբ ապրուստի միջոցները պակասում են արհեստաւորների, մանր վաճառականների և այլ կողմնակի պարապմունք ունեցող դասակարգերի համար և նրանք նեղվում են ընտանեկան-տնտեսական տեսակէտից, ապա ինչ կարող է անել թշուառների ու չքաւորների դասակարգը, որ անգործ, պարապ անցկացնելով ամբողջ ժամանակը՝ քայքայել է իր տնտեսութիւնը ամբողջապէս... Աւելորդ է ասել, որ բաւական թւով ընտանիքներ՝ սոված դրութեամբ՝ փակելով իրանց տան դռները՝ չուել են օտար երկիր՝ բաղդ որոնելու, գործ գտնելու և իրանց սև օրը մի կերպ լուսաւորելու համար...

Եթէ ասենք, որ օրերով, շաբաթներով մեր թշուառները հաց չեն ճարում, ոչինչ աւելորդ բան ասած չենք լինի, քանի որ մենք մեր աչքերով ամեն բոլէ տեսնում ենք, երբ նրանք թակում են սրա-նրա դուռը և չոր հաց աղերսում... Սակայն նրանց տրված փշրանքները ոչինչ են այն ծով կարիքի դիմաց, որ տեղի ունի նրանց շրջանում...

Եւ ահա այդ թշուառների կացութիւնը մի քանի օրով թեթևացնելու մտքով, այն էլ այս Զատկի «ազիզ» օրերում, տեղիս գործակալ Արտակ վ-ը Զատկից առաջ ժողով կայացնելով մի քանի պատւաւոր մարդկանցից բաղկացած մասնախումբ կազմեց, լիազօրելով որպէսզի քաղաքում հանգանակութիւն բացեն յօգուտ թշուառ ընտանիքների։ Ուստի մասնախումբը շրջելով շուկաները, հասարակական հիմնարկութիւնները, վաճառատները և այլ տեղերը, 260 ր. փող հանգանակեց և բաժանեց աղքատ ընտանիքներին, որպէսզի Զատկին գոնէ մի փոքր սրբված լինեն նրանց արտասուքները... Դա էլ մի փոքր սպեղանի է թշուառ ընտանիքների խորացած վէրքերին դրված... Որսորդ

ՆԱՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ

—

Կարելի՞ է արդեօք ամուսնանալ

Բալախանի, 18 մարտի

Նաւթահանքերի ղեկավար կառավարիչների դէպի ստորին ծառայողները և բանւորները բռնած դիրքը եթէ քննադատելու լինենք, պիտի գանք այն եզրակացութեան, որ մահկանացուները չը պիտի ամուսնանան։

Վերջիններիս ցանկի մէջն են մտնում գրասենեակային ստորոժները, տելէֆօնշչիկները, դվօրնիկները, կառապանները եւ բանւորները։ Դրանց թիւը, ընթերցող, քիչ չէ. նաւթահանքային շրջանում հազարների է հասնում այդ դասակարգի թիւը։

Դեռ քաղաքական շարժումներից էլ առաջ, 1901—2 թ., վերոյիշեալ դասակարգին պատկանող աշխատաւորները ապրում էին իրանց ընտանիքներով. դրանցից իւրաքանչիւրը, որոնց ընտանիքները (կին, երեխայ, ծնող) հնարաւորութիւն ունէին նաւթահանքերում ապրելու, ստանում էր մի սենեակ, ուր և տեղաւորվում էին 4—5 հոգի. իսկ նրանք, որոնց ընտանիքները հայրենիքումն էին գտնվում, այդպիսիներից 3—4 հոգի տեղաւորվում էին դարձեալ մի սենեակում և այդպիսով բաւականանում էին։

Սակայն, վերջին ժամանակներս սկսել են ընտանիքաւորներին հեռացնել, զրկել սենեակից։ Բացարձակ կերպով դրվում է ուլտիմատում. «կամ կնոջից ու երեխաներից բաժանվիր, կամ, եթէ առանց նրանց չես կարող ապրել, հեռացիր պաշտօնից, գործից»։

— Պարոն կառավարիչ,—ասում են բանւորները,—բաս ուր տանենք մեր երեխաներին... գիւղում հայ չէ մնացել, հաց չը կայ, այստեղ գոնէ միատեղ ապրում ենք, կարողանում ենք եօլա գնալ... 17—20 կամ ամենաշատը 22 րուբլի ռոճիկով չէ կարելի համ ես ապրեմ, համ 3—4 հոգի երեխաներ կերակրեմ, համ առանձին սենեակի վարձ տամ, համ էլ շաբաթը կամ երկու շաբաթը մի անգամ քաղաք գնամ երեխաներին տեսնելու։

17—20 րուբլի ամսական ռոճիկ ստացողի ընտանիքի իւրաքանչիւր անդամը (ընտանիքի՝ որ ընդհանրապէս միջին թւով 3—4 հոգուց է բաղկացած լինում) եթէ, օրական 2 ֆունտ հաց ուտի, 240 ֆունտ միայն պէտք է հաց գնվի, որ անում է 12 րուբլի ամսական. իսկ թէ ո՞ր տեղից պիտի հագնվեն, տան վարձ վճարեն, հիւանդ բժշկեն, թէյ, շաքար և գոնէ ամիսը մի անգամ ճաշաբար կերակուր ունենան, այդ պարզ չէ։ Այդ դասակարգը, որքան մեզ յայտնի է, հացից ու թէյից այլ սնունդ չունի և չէ էլ կարող չնչին ռոճիկով աւելին ապրել։

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Մարտի 29-ին Կովկասի Փոխարքան իր ամուսնու հետ այցելեց Հալաբարում գտնվող Սպասօ-Պրէօբրաժենսկի վանքը, ուր ապրում է Գօրու եպիսկոպոս Անտօնը։

◆ Մարտի 29-ին Թիֆլիսում հողին յանձնվեցին Լենքօրանի պրօգիմնազիայի տեսուչ Ի. Ստանիշեվսկիի և ուսուցիչ Մ. Շվարցի դիակները։

◆ Բժշկապետ Ց. Գասպարեանը ուղարկելով մեզ 100 րուբլի՝ յայտնում է, որ նուիրում է այդ գումարը Կիևի առևտրական ինստիտուտի հայ ուսանողների փոխադարձ օգնութեան դրամարկղին։ Խնդրում ենք դրամարկղի վարչութեանը յայտնել մեզ, թէ ում անունով և հասցէով ուղարկենք այս գումարը։

◆ Ք. Կարա-Մուրզայի մահվան 10-ամեակի յիշատակին Ղարասուբազարի (հանգուցեալ երաժշտագէտի ծննդավայրը) հայոց եկ.-ծխ. դպրոցի ուսուցչական խմբի նախաձեռնութեամբ ապրիլի սկիզբներին տրվելու է մի համերգ տեղական հայ-կաթոլիկաց դպրոցի դահլիճում։ Խառն խումբը բաղկացած կը լինի հայ-կաթօլիկ և հայ-լուսաւորչական երգիչներից, թւով 25 հոգի։ Խումբը կառավարելու է ուսուցիչ Ս. Յակովբեանը, որ Կոմիտաս վարդապետի աշակերտներից է։

◆ Գ. Սունդուկեանի ընտանիքը ստացել է Թէհրանից հետևեալ հեռագիրը՝ այդ քաղաքի թատերասիրաց ընկերութիւնից. «Խորին վշտով ցաւակցում ենք շնորհալի դրամատուրգ Սունդուկեանի մահվամբ»։

◆ Ստացանք հայերէն լեզուով լոյս տեսած՝ յայտնի ռուս հեղինակ Իվ. Սերգ. Տուրգենևի «Գարնանային Ջրեր» վէպը, Լ. Դանիէլեանի թարգմանութեամբ, հրատարակված Կ. Հ. Բ. Ընկերութեան Ա. Պօղոսեանի գրակ.-ֆօնդի արդիւնքով, բաղկացած 286 երեսից, գինը՝ 35 կօպէկ։

◆ Կովկասի Փոխարքային մարտի 29-ին ներկայացաւ հողագործութեան և հողաշինութեան գլխաւոր վարչութեան ճիւղի կառավարիչ իշխ. Վ. Մասալսկին։

◆ Թիֆլիսի հեռագրատան և հեռախօսի համար կառուցվող շինութիւնը արդէն պատրաստ է։ Ներկայիս պատրաստի շինութեան մէջ կատարվում են ներքին աշխատանքներ։ Հեռագիրը նոր շէնքը կը տեղափոխվի մայիսից, իսկ հեռախօսը ոչ շուտ՝ քան սեպտեմբեր ամիսը։

◆ Մարտի 29-ին Գայեանեան օրիորդաց դպրոցում կայացաւ Ուսուցչական Միութեան տարեկան ընդհանուր ժողովը, ուր կարդացվեցին անցեալ 1911 թւականի հաշիւը և ներկայ 1912 թւականի նախահաշիւը։ Առաջինը հաղորդվեց ի գիտութիւն, իսկ երկրորդը հաստատվեց։ Այնուհետև վարչութեան նախագահը յայտնեց, որ Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը 1500 րուբլի է յատկացրել ամառային մանկավարժական դասընթացքները կազմակերպելուն։ Գումարը կուղարկվի այն ժամանակ, երբ իրականացած կը լինի դասընթացքների գաղափարը։ Այս հարցը երկար վիճաբանութիւնների նիւթ եղաւ։ Ոմանք կարծում են, որ ժամանակի ուշ լինելու պատճառով դասընթացքները անկարելի կը լինի բաց անել. ոմանք էլ յարմար էին գտնում այս տարի ուսուցիչներ ուղարկել Պետերբուրգի կամ Մօսկվայի նոյնատեսակ դասընթացքները՝ դասախօսութիւններ լսելու և այլն։ Մեծամասնութիւնը կողմնակից էր դասընթացքները այստեղ կազմակերպելուն, իսկ վարչութիւնը այն կարծիքի է, որ կարող է աջողեցնել այս ամառ կուրսերը բաց անելու։ Ի վերջոյ ընդհանուր ժողովը պարտաւորեցրեց վարչութեանը իրերի դրութեան հետ ծանօթացնել մինչև մայիսի 10-ը, որպէսզի կարելի լինի այստեղ չաջողվելու դէպքում՝ որոշ կարգադրութիւն անել։

◆ Թիֆլիսի որբ և չքաւոր հայ երեխաներին օգնող «Լոյս» ընկ. վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, թէ ինքը յօգուտ իր ձրի դպրոցի ստացել է Թիֆլիսի Ժողովարանից նուէր 100 ր.։

◆ Թռչնաբուծութեան ցուցահանդէսի այցելուների թիւը բաւական խոշոր է։ Երեք օրվայ ընթացքում այցելել են 1,200 հոգի՝ վճարելով մուտքի համար սահմանված դրամը։ Ցուցահանդէսին այցելել են նաև տեղական դպրոցների սաները։

◆ Այս օրերս կը գումարվի մի խորհրդակցութիւն, Հալաբարում փոխատուվարկի ընկերութիւն կազմակերպելու մասին խորհրդակցելու համար։

◆ Ապրիլի 1-ից Թիֆլիսի տրամվայի երթևեկութիւնը կերկարացվի 1 ժամով. վերջնական կայարաններից վագոնները դէպի իրանց կանգնատեղին կը մեկնեն գիշերվայ $11^1/_2$ ժամին։

◆ Թիֆլիսի քաղաքային իրաւաբան Մ. Փանոսեանը քաղաքային վարչութեանը ներկայացրել է մի յայտարարութիւն, որով ցանկալի է համարում, որպէս զի Կուկիայում բացվի քաղաքային ծննդաբերական երկրորդ ապաստանարան։

◆ Թիֆլիսի քաղ. դումայի մօտակայ նիստերից մէկում կը կարդացվի քաղ. վարչութեան առաջարկը քաղաքապատկան աղիւսագործարան հիմնելու մասին քաղաքային հիմնարկութիւնների պէտքերի համար։

◆ Մարտի 31-ին կը կայանայ Հալաբարում կազմակերպչական առաջին ժողով յիշեալ քաղաքամասում սպառողական ընկերութիւն ստեղծելու նպատակով։

◆ Ապրիլի 4-ին նշանակված է Թիֆլիսի ներբօրսային կոմիտէի նիստը.

մուծվող և տրամծվող ապրանքների իւրաքանչիւր պուդից որոշ տուրք վերցնելու նկատմամբ խորհրդակցելու համար։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել, որ ինքը զանազան տօների առիթով ստացել է հետևեալ նուէրները։ Յօգուտ որբանոցի՝ Աւ. Սարուխանեանից, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Նունէի, 25 ր., օր. Ն. Գ. Սունդուկեանից 2 պասկա, տ. Յ. Սպէնդիարեանից 15 փունտ մրգեղէն և քաղցրաւենիք և Յովհ. Զաթուլբաշեանից 30 փ. կօնսերվ։ Յօգուտ աղքատաց՝ Յով. Տէր-Յովսէփեանից, ի յիշատակ իր հանգուցեալ որդի Գարեգինի, 10 ր., Հ. Տէր-Պօղոսեանից 5 ր., Խ. Ղալչեանից 3 ր., մի պարոնից 2 ր., տիկ. Աստուածատրեանից 4 կտոր հնոտի շորեր և 1 զոյգ կօշիկ։ Յ. Թամոյեանից, հոգեհացի փոխարէն՝ ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Եղիսաբէթի, 150 ր., Ստ. Խաչիկեանից, պսակի փոխարէն՝ ի յիշատակ հանգուցեալ հօրեղբօր կնոջ՝ Մ. Ն. Խաչիկեանի, 10 ր.։

◆ Երևանցի Արշալոյս Տէր-Մարտիրոսեանը Կովկասի Փոխարքայից թոյլտւութիւն է խնդրում, որպէսզի ինքնաշարժներ բանեցնէ Երևանի և Դարաչիչագի, Դարաչիչագի և Ղարաքիլիսայի ու Երևանի և Ղամարլուի միջև։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, Հասարակական ակումբում (Բօրսայի դահլիճ) Ա. Եւանգուլեանը կը կարդայ մի զեկուցումն վերջերս կատարված էքսկուրսիաների մասին։ Զեկուցումից յետոյ կը կայանայ գրական-երաժշտական բաժին։

◆ Քաղաքային Նախկին իւրիսկօնսուլտ Մ. Աթաբէգեանի փոխարէն քաղաքային ինքնավարութիւնը մտադիր է հրաւիրել իւրիսկօնսուլտի երկու օգնականներ։ Տրվում են երդ.-հաւատ. Կ. Ջափարիձէի և Վ. Տոլվինեանի անունները այդ պաշտօնի համար։

◆ Քաղաքային տնտեսական-առևտրական ոստիկանութեան գլխաւոր գործակալ Բ. Ս. Բաբեանը հիւանդութեան պատճառով հրաժարվում է իր պաշտօնից, որի մէջ ծառայել է 27 տարի։ Նա կը ստանայ 1500 ր. կենսաթոշակ։

◆ Քաղաքային վարչութիւնը պետական բանկին ի պահեստ է յանձնել հանգուցեալ Շաղինեանի կովկասեան համալսարանի ֆօնդի օգտին նուիրաբերած 50,000 ր.։

◆ Եղբ. Միլեանների առևտրական տունը ապահովագրել է իր բոլոր ծառայողներին, թւով 60 մարդ։ Ապահովագրման գումարը 100,000 րուբլու է հաւասարվում։

◆ Ապրիլի 1-ին, ցերեկվայ 12 ժամին, Թիֆլիսում տեղի կունենայ Թիֆլիսի Մահմեդականների Դրամատիկական Ընկերութեան միջոցներով կառուցված ժողովրդական Տան բացումը, որ գտնվում է Բօտանիկական փողոցի № 1 տանը։

◆ Մարտի 29-ին Թիֆլիսեցի Աւետիք Նանշագօվը յայտնեց ոստիկանութեանը, որ 7 ամիս առաջ Վիկտոր (նաև Գէօրգի) Զուբինիձէն կնութեան առաւ իր աղջկան, մինչդեռ յետագայում պարզվեց, որ նա 8 տարի առաջ ամուսնացած է եղել Եկատերինա Կվխաաձէի հետ։ Զուբինիձէն ձերբակալված է և ենթարկվելու է դատաստանական պատասխանատուութեան։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Գողեր.—Վերջին օրերում Մոսկվայում բռնվել են 143 գող, որոնցից 108-ը գրպանահատներ են։

◆ Ի. Ի. Մեչնիկօվը.—Պարիզից հեռագրում են հետևեալը. «Գիտութեանց ճեմարանում կայացան ընտրութիւններ՝ ճեմարանի տարերկրեայ աշխատակից-անդամների։ Նկատի առնված երեք թեկնածուներից 36 ձայնով ընտրվեց Մեչնիկօվը։ Մնացած երկուսն էին՝ Լօնդօնից սըր Լօկայերը և Բերլինից՝ Շվենդեները։

◆ Ժամանակիր աշխատանքների դատապարտվածները.—Մոսկվայի տեղափոխական բանտում արդէն պատրաստված է առաջին խումբը ժամանակիր աշխատանքի դատապարտվածների, բաղկացած 200 մարդուց։ Այս օրերս գալու է Մոսկվա՝ զանազան քաղաքների բանտերից էլի 500—600 մարդ, և աստիճանաբար կուղարկվեն դէպի Ամուր գետը, որտեղ կառուցվում է ամուրեան երկաթուղին։ 1911-ի աշնանը գտնըվում էին այնտեղ 8000 ժամանակիր, իսկ այս գարնանը այնտեղ գնալու են 9000-ից ոչ պակաս։

◆ Քաղաքի ծախսը՝ անզգայ արբածների վրա.—Մոսկվայում անզգայ արբածներին ոստիկանատուն հասցնելու համար՝ մինչև հիմա կառապանները ձրի էին տանում. բայց որովհետև հաշւից երևում է, որ այդպիսիների թիւը հետզհետէ շատանում է՝ տարէնը 1000-ով, այնպէս որ այս տարի նրանց թիւը հասնում է 8000-ի, այդ պատճառով քաղաքային վարչութիւնը որոշել է խնդրել դումայից իւրաքանչիւր արբածի համար 25 կ., տարէնը մօտ 2250 ր.։

◆ Միօրեայ ժողովրդագրութիւն.—Միօրեայ ժողովրդագրութիւնից երևում է, որ Մոսկվայում բնակվում են 1.600,000 մարդուց աւելի։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ՄԵՐ ՀՆԱԳՈՅՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԺԷՔՆ ՕՏԱՐՆԵՐԻ ԱՉՔՈՒՄ

Գրականութիւնն այն հայելին է, որի մէջ արտացոլում է իւրաքանչիւր ազգի պատկերն իր առանձնայատուկ գծերով և անցեալ կեանքն՝ իր սպեցիֆիկ գոյներով։ Դա է միակ գործօնը, որ կարող է ելակէտ հանդիսանալ որևէ ազգի հէնց ներկայ կեանքն ուսումնասիրելու և վերջինի հետ կապված հոգեկան-մտաւոր ու կենցաղական ինչ-ինչ կողմերը լուսաբանելու խնդրում։

Մինչ քաղաքակրթութեամբ անհամեմատ մեզանից բարձր կանգնած արևմտեան ազգերն այսօր մեղուի ժրաջանութեամբ պեղումներ են կատարում երկրագնդի զանազան վայրերում՝ պատմութեան վերնաշէնքը հաստատուն հիմքերի վրա դնելու և քաղաքակրթութեան որոշ էտապների ընձեռած նիւթերով՝ ազգերի անցեալ կեանքը հետազօտելու համար, մեզանում կան գրականագէտի մանիայով բռնված որոշ անհատներ, որոնք իրանց պրօֆան հասկացողութեամբ և գրականութեան մասին ունեցած թիւր և սխալ ըմբռնողութեամբ՝ ջանում են առ ոչինչ համարել գործունէութիւնն այն փոքրաթիւ անհատների, որոնք ամենայն անձնուրացութեամբ և խղճի մտօք տքնում են վերականգնել մեր հնագոյն մատենագրութեան բնագիրը՝ եղած ձեռագրերի հոգեմաշ ու ծանր բաղդատութեամբ և մեկնութեամբ։

Այո, տքնում են վերականգնել վաւերագրութիւնն այն մատենագրութեան, որի մէջ արտացոլում է հայ ազգի անցեալ, անգամ ներկայ կեանքն ու պատմութիւնը (այն չափով, որ չափով անցեալը հիմք է կազմում ներկայի)։ Հետևաբար այդ տքնումն արժանի է խրախուսանքի, քաջալերութեան և ոչ արհամարհանքի։

Եթէ մենք այսօր փոքր ի շատէ քաղաքակիրթ ազգերի շարքը դասվելու պատիւն ունենք մեր գրականութեամբ և պատմութեամբ, պարտական ենք մեր անբարբառ յուշարձաններին՝ ընդհանրապէս և նախնեաց մատենագրութեանը՝ մասնաւորապէս։ Եթէ, յիրաւի, այդպէս է, որի դէմ ոչ մի առարկութիւն լինել չէ կարող, ապա ուրեմն անկարելի է պատկառանքով չը խօսել այն անհատների մասին, որոնք դարերի փոշին թափ տալով, մատենագրութեան խեղաթիւր և աղճատ էջերի բնագրերը վերականգնելով՝ տալիս են մեզ հնագոյն գրական երկերն ամբողջացած։

Այս գործում մինչև օրս առանձնապէս խոշոր դեր են խաղացել պ. պ. Ստեփան Մալխասեանցը, Ստեփան Կանայեանը և Էջմիածնի միաբան դպիր Գալուստ Տէր-Մկրտչեանը, որոնցից վերջին երկուսի ջանքերով Ագաթանգեղոսի 50 ձեռագրից աւելի բաղդատութեամբ հրատարակութեան մասին յայտնի գիտնական Paulus Peeters-ը խիստ գովասանքով է խօսում, որ և թարգմանաբար բերում ենք ստորև.

«Ագաթանգեղոսի պատմութեան վրա ի մի են կուտակվել հռչակաւորութեան բոլոր տեսակները։ Ճշմարիտ հայի համար այս փոքրիկ գիրքը՝ հայութեան քրիստոնէութեան դարձի դիւցազնական լեգենդն է, ազգային վէպը և միանգամայն նախնեաց պաշտելի լեզուի յիշատակարանը։ Հաւատը ցեղի և բաշխարհի աւանդութիւնները, մատենագրութիւնը և գեղարուեստը շրջապատել են նրան մի կրօնական սքանչացմամբ, որն աւելի ևս ջերմացել է հայրենիքի երկարատև թշուառութիւններով։ Միւս կողմից՝ քննադատութիւնը տիրացել է այս պարզամիտ և պերճախօս էջերին և աւելի ևս հռչակել նրանց իր կծու վէճերով։ Այնչափ կարդացված և այնչափ մեկնաբանված այս երկը՝ սակայն դեռ ևս չէր հրատարակված պատշաճ խնամքով։ Ժամանակաւոր հրատարակութիւններ միայն ունէինք նրանից, պատահական, առանց ձեռագրական աւանդութեան խորին ուսումնասիրութեան։ Սովորական ընթերցողները դրանից աւելին էլ չէին պահանջում։ Բայց որ աւելի ծանրակշիռ է՝ բանասէրները, պատմաբանները, քննադատները դատում էին և դատափետում, ով և ինչպէս կամենար, հազար անգամ այլափոխված բնագրի մանրամասնութիւնները, որոնց նախնական ձեր խուսափում էր նրանցից։ Աշխատանքը, որ մնում էր կատարելու, ահա այժմ գլուխ է բերված հիանալի կերպով Էջմիածնի գիտնական վարդապետ Գալուստ Տէր-Մկրտչեանի և պ. Ստեփան Կանայեանի ձեռքով, երկու հմուտներ՝ կատարելագործված արևմտեան լաւագոյն մեթօդներով։ Նրանց հրատարակութիւնը անթերի է իր պարզութեամբ, գեղեցիկ ճաշակով և ճշտութեամբ։ Գիտական տեսակէտից ներկայանում է մեր առաջ ամենապատուաւոր տեսքով։ Հարկաւ նրանք չէին կարող սպառել այն ահագին նիւթը, որ սպասում էր դեռ իր գործադրութեանը։ Նիւթի այս առատութեան առաջ, որ մասամբ նաև սերտ է, բարեխիղճ հրատարակողները չեն թողել անուշադիր և ոչ մի կէտ, որ գործնականապէս իրագործելի էր։ Բայց նախընթաց հինգ հրատարակութիւններից՝ օգտագործել են նրանք 50 ձեռագրից աւելի, վճիտ յարատև խնամքով, որի լիովին ապացոյցը տալիս է նրանց առաջաբանը։ Առ առաւելն՝ կարելի էր ցաւել, որ նրանք չեն ձևակերպած իրանց երկարատև և բարեխիղճ հետազօտութեան հետևանքը մի ընդհանուր տեսութեան մէջ։ Նրանց միտքն անշուշտ՝ շատ վճիտ է և ակներև, սակայն այդ պէտք է լինում փնտրել գործի զանազան մասերում, որոնք լրացնում են միմեանց։

«Ագաթանգեղոսի ձեռագրերը երեք խմբի են բաժանվում, չը հաշված մի քանի խառնածին օրինակներ, որոնք խուսափում են հաստատ դասակարգվելուց (տես առաջաբան, էջ ԻԷ)։ Երկրորդ խումբը, որից ծագել են միւս երկուսը, ինքն էլ բղխում է մի աւելի հին խմբագրութիւնից, որի հետքերը պահված են Կորիւնի գրած ս. Մեսրոպի կենսագրութեան մէջ։ Այսպէս ուրեմն երկրորդ խումբն է, որ ներկայացնում է հիմնական բնագիրը, որից ծագում է ս. Գրիգոր Լուսաւորչի «գործերի» յունարէնը։ Առաջին խումբն անջատվել է երկրորդից դիպուածական խեղման շնորհիւ, որով միջակտուր է եղել առաջաբանը, «պատահական» անդամատութեան շնորհիւ..., որով ստացվել է «համառօտ» առաջաբանը»։ Այս խեղանդամ օրինակից ծագել է մի ամբողջ ընտանիք, որ ունեցել է իր սեփական կեանքը (էջ ԽԳ)։

«Երրորդ խումբն արդէն՝ աւելի շուտ մի արհեստական խմբագրութիւն է, բնորոշված թեթև գիտակցական սրբագրութիւններով, «արդիւնք գիտակցաբար կատարված թեթև խմբագրութեան» (առաջաբան)։ Այս խմբագրութեան նախատիպը ծագում է երկրորդ խմբի մի հնագոյն օրինակից։ Այս օրինակից բղխում են և ուրիշ ընդօրինակութիւններ, աւելի ազատ փոփոխված, այնպէս որ մի քանի ճառընտիրներում (libri eclogariorum) գտնված բնագիրը գիտնական հրատարակողների վրա մի բոլորովին նոր խմբագրութեան տպաւորութիւն է թողնում, որի և խմբագրութեան տեղը լինելու է Վարագը (էջ ԾԲ)։

«Մեր այս արագ ուրուագիծը հազիւ միայն մի աղօտ գաղափար է տալիս այն ահագին աշխատութեան մասին, որի վրա հիմնված է պ. պ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Կանայեանի հրատարակութիւնը։ Բառի բուն նշանակութեամբ ձեռներէցութեան գործ է (ocuvre d'initiateurs) նրանց արածը։ Նրանց նշանաւոր հրատարակութիւնը վերջապէս ապահովում է մի հաստատուն հիմք ապագայ հետազօտութեանց համար, որին շարունակվելու է ենթարկվել Ագաթանգեղոսի բնագիրը։ Հայ պատմագրերի շարքի հրատարակիչները պատրաստում են և Մովսէս Խորենացին, որի համար կարելի է միայն բաղձալ, որ նմանվի այն տիպի օրինակին, որ տուել են պ. պ. Տէր-Մկրտչեանը և Կանայեանը»։ (Paulus Peeters, Analecta Bollandiana, Tomus XXIX, fasc. III, § 94, էջ 332—333. Bruxelles, 1910)։

Այսպէս ուրեմն բերված վկայութիւնից ակներև է դառնում, թէ ինչ արժէք և նշանակութիւն կարող են ունենալ վերոյիշեալ հայ բանասէրների լուրջ, խորագնին համեմատութեամբ և մեկնութեամբ լոյս ընծայած մատենագրերը, որոնց սերիան, ինչպէս լսում ենք, Մովսէս Խորենացու հրատարակութեամբ վերջանալու է։ Ցանկալի էր, որ պատկառելի Սուքիաս արքեպիսկոպոսն՝ ինչպէս մինչև այժմ, այնպէս էլ սրանից յետոյ՝ իր նիւթական աջակցութիւնը ցոյց տար յիշեալ բանասէրներին՝ լուրջ հետազօտութեամբ լոյս ընծայելու հնագոյն մատենագրութեան մնացած երկերն ևս, որոնց ամբողջական ժողովածուն, իրաւամբ, մեր գրականութեան թագն ու պարծանքը կը կազմէ։ Եւ այդ գործին զարկ տալու աւելի բարեպատեհ առիթ չէր կարող լինել, քան այս, որ այս թիւս հայկական տպագրութեան 400-ամեակը տօնելու պատրաստութիւնն է տեսնվում։ Դա ամենալաւ յուշարձանը կը լինի հայկական տպագրութեան 400-ամեակի։

Գ. Մելոյեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ջութակահար Հուբերման

Լսեցինք ջութակահար Հուբերմանին։

Որպիսի քնքշութիւն, որպիսի նրբութիւն, որպիսի զգայունութիւն տաղանդաւոր նուագողի մէջ։

Հուբերմանը դիւթում է իր ջութակով։ Նա այնպիսի կենդանի, պատկերաւոր, արտայայտիչ ձայներ է դուրս հանում իր ջութակի լարերից, որ թւում է, թէ մարդկային հոգին ու սիրտն են իրանց ամբողջ էութիւնը զգում ձեր առաջ։

Նրա նուագած Մենդելսօնի Violinconzert-ը Op. 64 իր երեք հաւներգութիւններով հոգեկան նուրբ թելերի հնչիւնների մի հոյակապութիւն էր։ Նոյնպէս հրաշալի էր և Պագանինիի La Clochette-ը իր գողտրիկ դայլայլիկների թրթիռներով։

Նա ծափահարութիւնների տարափից ըստիպված նուագեց մի քանի նոր կտորներ, որոնք նոյնպէս գեղեցիկ էին, ինչպէս և ծրագրում նշանակվածները։ Սիրող

Արքունական Թատրոնում

Հինգշաբթի, մարտի 29-ին, Թիֆլիսը տեսաւ Արքունական թատրոնում մի ներկայացում, որի նմանը դեռ երբէք չէր տեսել։

Մարտովի դրամատիքական խումբը, ղեկավարութեամբ Մոսկվայի Գեղարուեստական թատրոնի ըէժիսօր Մարջանովի, ներկայացրեց յայտնի յոյն կլասիկ Սոֆոկլի «Էդիպ արքան» տրագեդիան այն ձևով և եղանակով, ինչպէս հին Ելլադայումն էին ներկայացնում, այսինքն մարտի 29-ին Արքունական թատրոնը ուղղակի վերածված էր հին յունական թատրոնի իր ամֆիթատրոնով։ Ներկայացումը տեւեց անընդհատ 2 ժամ, առանց անտրակտների, առանց առանձին գործողութիւնների։ Հանդիսականները փոխադրված էին հին յունական, կլասիկ աշխարհը, և ամբողջ յունական կեանքը նրանց առաջ էր իր սովորութիւններով, իր նիստ ու կացով, իր աշխարհահայեացքով։

Էդիպ արքայի դերը, տրագեդիայի գլխաւոր հերոսի ամենադժուար դերը, կատարեց դերասան Մուրոմցեվը և կատարեց աննման կատարելութեամբ. տրագիկական և հոգեբանական խոր մոմենտներում նա հիացրեց հանդիսականներին, ցոյց տալով մարդկային հոգու տանջանքների բոլոր ելևէջները։ Իօկաստա թագուհու դերը կատարեց տիկ. Ս. Զարուսկայա ոչ-պակաս հմտութեամբ։

Ով կամենում է ապրել մի րոպէ հին կլասիկ աշխարհի կեանքով, նրա յուզմունքներով, թող գնայ տեսնելու «Էդիպ արքայի» ներկայացումը։ Հ. Ա.

Արտիստական Թատրոնում

Ս. Տարսկիի «Ռազմընկերներ» (Боевые товарищи) 4 գործ. պիէսը, որ, ինչպէս լսեցինք, մեծ աջողութեամբ խաղացվել է ներկայ մարտի 26-ին Բարատօվի և Բէլեայեվի խմբի նախաձեռնութեամբ, կրկնվեց նոյն խմբի կողմից մարտի 29-ին, հինգշաբթի երեկոյեան։

Պիէսը կրում է ժամանակակից բնաւորութիւն։ Սիւժէտը վերցված է ռուս-ճապօնական պատերազմի ժամանակներից, սակ զինուորականների կեանքից։ Առաջ բերված տիպերից գլխաւոր երկուսը—դրագունեան գնդի հրամանատար-գնդապետի և փոխգնդապետի պաշտօններով, որոնք՝ չը նայած իրանց հասուն տարիքներին՝ ջերմ կերպով սիրում են մի ծանրաբարոյ, խոհեմ ու գեղեցկատեսիլ օրիորդի, սակայն միևնոյն ժամանակ իւրաքանչիւրը դրանցից ճգնում է զոհել իր բուռն սէրը՝ պաշտելի օրիորդին մէկը միւսին զիջելու համար,—այնպիսի ազնուասիրտ, բարեհոգի, ուժեղ կամքի տէր, պատուազգաց և զինուորական դիսցիպլինային նուիրված կատարելատիպեր են, որ հազուագիւտ կարող են համարվել՝ ի նկատի ունենալով ներկայ դարի մարդկային հոգեբանութիւնը։ Բացի այդ երկու տիպերից, մնացածներին կարելի է համարել սովորական, առօրեայ կեանքից լուսանկարված տիպեր։

Պիէսն ունի բեմականութիւն և բոլոր գործողութիւնների ժամանակ հանդիսականների ուշադրութիւնը բևեռված է պահում դէպի խաղացողների իւրաքանչիւր շարժուածքը։ Այդ բանին, ի հարկէ, աւելի նպաստում է Բարատօվի և Բէլեայեվի խմբի աջող անսամբլը։

Յիշեալ պիէսի ներկայացմանը մասնակցում է խմբի համարեա մեծագոյն մասը՝ իր առաջնակարգ ույժերով։

Թատրոնը ամբողջապէս լի հասարակութիւնը ծափահարում էր պիէսի առաջադրած տիպերը հարազատօրէն պատկերացնող դերակատարներին։

«Ռազմընկերները» երրորդ անգամ կը խաղացվի վաղը, կիրակի, ապրիլի 1-ին։

X.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Իննսուն Երեք», Վիկտոր Հիւգօյի, պատմական վէպ. 1912 թ., թարգմ. բնագրից Ա. Սաֆարեանի, 432 երես (Արտատպված «Արօր» ամսագրից)։

Ահա ռօմանտիկ պարունակներում ամփոփված պատմական մի կլասիկ վէպ. Վիկտոր Հիւգօյի «Իննսուն Երեքը»։

Ֆրանսիական մեծ յեղափոխութեան արիւնոտ տարիներից մէկն է դա...

Ալեկոծված երկիրը տարուբերվում էր պատմական ցասման ժայթքումներով։ Երկու տիտանական ույժեր մաքառում էին իրար դէմ։ Ամբողջ Ֆրանսիան հրդեհված էր։ Նոր հասունացած, կեսուռնակ բուրժուազիան ծառացել էր հին, տապալվող ազնուապետական աւատականութեան դէմ, ջլախտով խոցված այդ հիդրայի դէմ։ Բաւական է հակադրել այն ժամանակվայ Պարիզը Վանդէին, որ ամբողջովին պատկերանայ երկու հակապետ ույժերի ամբողջ տրագիզմը, հին ու նոր Ֆրանսիայի խորունկ տրագիզմը։

Բուրժուական Պարիզը յեղափոխութեան այն խարոյկ-կենտրոնն էր, որտեղ Բաստիլն էր կործանված, որտեղ հին աւատականութիւնն էր թաղված, որտեղ Լիւդովիկոս XVI արքան հասարակ կապէ էր դարձած ու գլխատված, որտեղ փափկամարմին արքայազնը կօշկակար Սիմօնին էր յանձնված, որտեղ գիլիօտինը մարդկային գլուխներ թռցնելու օպերացիայով էր զբաղված, որտեղ, վերջապէս, յանուն բուրժուական տիրապետութեան, Սենայի ջուրը արիւնով էր ողողված...

Պարիզը մի հնոց էր ոչ միայն աւատական-արքայական Վանդէի համար. Պարիզի հնոցը սպառնում էր նաև Եւրոպային։ Վերջինս ապշել էր. իր գլուխը կորցրած՝ նա պատրաստվում էր հանգցնելու այդ տարերային հնոցը, հանգցնելու՝ բայց ոչ ջրով, այլ ըմբոստ տարրերի արեան ծովերով։

Հին Ֆրանսիային աջակցում էր հին Եւրոպան։ Խարոյկից շառագունված հօրիզոնը շշմեցրել էր բացարձակ միահեծանութեանը։

«93 թւականը,—ասում է Վիկտոր-Հիւգօն,—դա ինքը պատերազմն է. Եւրոպայի պատերազմը՝ Ֆրանսիայի դէմ, Ֆրանսիայինը՝ Պարիզի դէմ։ Իսկ ինչ է յեղափոխութիւնը. դա յաղթութիւն է, Ֆրանսիայի յաղթութիւնը Եւրոպայի դէմ և Պարիզինը՝ Ֆրանսիայի դէմ։ Դրա մէջն է կայանում այդ զարհուրելի ժամի անհուն նշանակութիւնը։ Իննսուն երեք թւականը—դա աւելի մեծ է, քան թէ նոյն դարի ամբողջ մնացորդը։ Չը կայ ոչինչ աւելի տրագիկ։ Եւրոպան հարուածում է Ֆրանսիային, Ֆրանսիան հարուածում է Պարիզին։ Մի դրամա է դա, որ դիւցազներգութեան հմայքն ունի»։

«... Փոթորիկ է այնտեղ, որ մանչում է իր բոլոր կատաղութեան և իր բոլոր մեծութեան մէջ»։

Այո, դա մի փոթորիկ էր, որ բարձրացել էր երկու դասակարգերի ճակատագրական կռւից, մի փոթորիկ էր, որի աղբիւրը այդ երկու հակոտնեաների հասարակական-տնտեսական կեանքի ծալքերումն էր թաղնված։

Պարիզը՝ յաղթողների կենտրոնն էր. բայց նոյն Պարիզը սովածների մի ամբողջ լէգիոն ունէր։ Բուրժուազիան օգտվեց սովածների ու բանւորների ակտիւ ույժերով, բայց յետոյ մերժեց նրանց հաց և իրաւունք տալը։ Բայց այդ չէր խանգարում յաղթողներին՝ սեփականացնելու «Հաւասարութիւն, Ազատութիւն և Եղբայրութիւն» լօզունգները...

Պարիզը պոռթկացող ցասման ժայթքումների բոյնն էր, որովհետև նա առաւել զօրեղ կերպով անդրադարձել էր իր վրա միահեծանութեան դաժան լուծը։ Իրական ույժերի յարաբերութիւնը բուռն պայքարի մէջ էր. պայքարը հակադիրների մէջ՝ յօշոտման աստիճանին էր հասել։

Ռօբէսպիէր, Դանտօն, Մարատ, Սէն-Ժիւստ, Կուտօն, Սիմուրդէն... ինչէր չեն ասում այս անունները։ Կարդացէք Վիկտոր Հիւգօյի «Իննսուն Երեքը», որը ըստ ամենայնի ճշգրտօրէն է նկարագրել քաղաքական դէպքերի ու անցքերի արտաքին պատկերը։

Դրանք էին, որ յեղափոխական Ֆրանսիան էին կառավարում, դրանք էին, որ յանուն հանրապետութեան՝ Եւրոպայի դէմ զինվում, բայց և դրանք էին, որ միմեանց գլուխ դէպի գիլիօտին էին ճանապարհ դնում...

«Այն րոպէն, երբ նրանք դատապարտում էին Լուի XVI-ին, Ռօբէսպիէրը 18 ամիս միայն կեանք ունէր իր առաջ, Դանտօնը՝ 15 ամիս, Վէրնիօն՝ 9 ամիս, Մարատը՝ 5 ամիս և երեք շաբաթ... Շարլօտա Կորդէն մորթեց Մարատին, Ռօբէսպիէրը գլխատեց Դանտօնին, Կօնվէնտը՝ Ռօբէսպիէրին...

Վիկտոր Հիւգօն, ռօմանտիզմի այդ կատարեալ, ամբողջացած ներկայացուցիչը, շատ հետաքրքրական գոյն է տուել իր այս պատմական վէպին։ Իր սինտետիկ ոճը՝ դա ինքը Հիւգօն է։ Այս վէպի մէջ նա տուել է ֆրանսիական մեծ յեղափոխութեան 93 թւի սոսկ շարժման պատկերը, առանց շեշտելու նրա բազմածալ պատճառները։ Սինտետիկ ոճի հետ միացած է նաև նրա երաժշտական լեզուն՝ իրան յատուկ բնաւորութեամբ, հակադիր մտքերի սրամիտ դասաւորութեամբ։

Կօնվանսիօնը...

«Չը կայ ոչինչ, որ աւելի տարօրինակ և միանգամայն աւելի վեհ լինէր,—ասում է Հիւգօն։ —Հերոսների մի խումբ և երկչոտների մի հօտ։ Վայրագ գիշատիչները՝ լեռան վրա (Լեռը), և սողոսկող որդերը՝ ճահճի մէջ։ Այստեղ եռում էին, ընդհարվում, յարձակվում, սպառնում, մարտնչում և ապրում...»։ «Աջը—Ժիրօնդը, ձախը—Լեռը»։

Սա գեղարուեստական արտայայտութիւնների այն օրինակներից մէկն է, որով զօրեղապէս օժտված էր Վ. Հիւգօյի տաղանդը։ Մանաւանդ ըէակցիօն Վանդէի ապստամբութիւնը նկարագրելիս, Վ. Հիւգօն տալիս է ուղղակի կենդանի պատկերներ։ Բայց այդ պատկերները միայն արտաքինով չեն փայլում. նրանց մէջ կայ Վ. Հիւգօյի գրած ուրոյն բովանդակութիւնը։ Կանգնած լինելով հանրապետականութեան կողմը, նա [illegible] Վանդէն [illegible] անուանում, իսկ [illegible] ճանչով [illegible]։

«Լեռը [illegible] ասում է [illegible] միւսը՝ [illegible] բարբարոս էր։

Լեռների [illegible] Վանդէն [illegible] չացնել։

«Լեռների [illegible] Վանդէի, [illegible] մէկը [illegible] համար, միւսը՝ [illegible] թեան համար, [illegible] թիւն, միւսը [illegible] պաշտպանում [illegible]։

«Ընդհանուր [illegible]։

Իր գրական գործունէութեան [illegible] շրջանում ancien regime-ի [illegible] XIX դարի [illegible] Վիկտոր Հիւգօ [illegible] բուրժուական [illegible] որով բուրժուական դասակարգային ձգտտումները նա համարել է համամարդկային, իսկ մասնաւոր սեփականութեան գաղափարի սրբագործումը՝ կոմմիւնի սրբագործում։

Իբրև ռոմանտիզմի հայր՝ Վիկտոր Հիւգոյի նշանակութիւնը իր ժամանակին եղել է շատ մեծ. նա ունեցել է համաեւրոպական համբաւ։ Նրան շատերն են հետևել, նրա ազդեցութեանը շատերն են ենթարկվել, նրա ձևերը շատերն են ընդօրինակել, ինչպէս նաև մեր ռոմանտիկները։

Այս ստուար գործը ֆրանսերէն բնագրից թարգմանել է Ա. Սաֆարեանը։ Թարգմանական լեզուն ըստ ամենայնի սահուն է ու մաքուր։

Արժէ կարդալ գրչի վարպետի այս ռոմանտիկական արտադրութիւնը՝ պատկերացնելու համար ֆրանսիական մեծ յեղափոխութեան այդ յախուռն ու տենդոտ շրջանը, այլ և պատկերացնելու համար, թէ որպիսի ողբերգական հեռանկարներ ունի իր առջև առհասարակ հնի ճակատագրական պայքարը կայտառ ու կենսունակ նորի դէմ։

Սուրխաթեան

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Բանաստեղծութիւններ», Վահան Տէրեանի, I հատոր, Մոսկվա, 1912 թ., էջ 205, գ. 1 ր.։ 2) „Честь", վէպ Շիրվանզադէի, հեղինակի թոյլտւութեամբ թարգմանեց Ап. X., Մոսկվա, 1912 թ., էջ 245, գ. 1 ր.։ 3) «Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ», աշխատասիրեց Սահակ վ. Ամատունի, Վաղարշապատ, 1911 թ., էջ 198, գ. 50 կ.։ 4) «Ինչու հեռացանք» (1911 թ. կաթող. ընտրութեան նկարագիրը), Բենիկ վարդապետի, պատկերազարդ, Թիֆլիս, 1912 թ., էջ 111+XVII, գ. 50 կ.։ 5) «Համիդի օրերէն» (դրուագ մը մեր յեղափոխական անցեալէն. «Իմ փախուստը»), դոկտ. Կ. Ց. Փաշայեանի, Կ. Պոլիս, 1911 թ., էջ 28, գ. 1 ղրշ.։ 6) «Turkey and the Turk», by one who Knows, 1912 թ., էջ 75. 7) «Փեսացումուկը» պատկերազարդ հէքիաթ Աթ. Խընկոյեանի, Թիֆլիս, 1912 թ., էջ 16, ձրի յաւելուած «Հասկեր» ամսագրի։ 8) „Таблицы вычисленія процентовъ", կազմեց Ն. Ո. Աբրահամեան, Թիֆլիս, 1912 թ., էջ 127, գ. 85 կ.։ 9) «Տաճար» շաբաթաթերթի 1912 թ. № № 4, 5 6 և 7, Կ. Պոլիս։ 10) «Կոչնակ» շաբաթաթերթի 1912 թ. № № 7, 8, 9, 10 և 11, Նիւ-Եօրք։ 11) «Հոսանք» շաբաթաթերթի 1912 թ. № 4, Կահիրէ։ 12) «Նոր Դպրոց» շաբաթաթերթի 1912 թ. № № 7—8, 10—11 և 11—12, Թիֆլիս։ 13) «Բողբոջ» կիսամսեայ հանդէսի 1912 թ. № 3, Մարզուան։ 14) «Շանթ» կիսամսեայ հանդէսի 1912 թ. փետր. $^1/_{14}$-ի համարը (№ 16), Կ. Պոլիս։ 15) «Տարազ» պատկերազարդ հանդէսի 1912 թ. № № 2 և 3, Թիֆլիս։ 16) «Առողջապահ» պարբերականի (յաւելուած «Աղբիւր-Տարազի») 1912 թ. № 2, Թիֆլիս։ 17) «Աղբիւր» մանկական ամսագրի 1912 թ. № 2, Թիֆլիս։ 18) «Հասկեր» մանկական ամսագրի 1912 թ. № № 1 և 2, Թիֆլիս։ 19) «Արարատ» ամսագրի 1912 թ. № № 2 և 3, Էջմիածին։ 20) «Բժիշկ» ամսաթերթի 1912 թ. № 1, Կ. Պոլիս։ 21) „Земледѣлецъ" պատկերազարդ ամսաթերթի 1912 թ. № 3, Պետերբուրգ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 յունվարի*)

Ներկայ տարվայ յունվարից «Մշակ» լրագիրը թևակոխեց իր գոյութեան և գործունէութեան քառասունմէկերորդ տարին։ Այսպիսի երկարատև կեանք հազուագիւտ է հայոց պարբերական մամուլի պատմութեան մէջ, իսկ մեր, ռուսահայոց մէջ՝ միակ օրինակն է մինչև այսօր. ուստի «Մշակը» ամենայն իրաւամբ համարվելու է ռուսահայոց աւագագոյն լրագիրը։

Գրիգոր Արծրունին հիմնելով «Մշակը»՝ գծեց նրա համար մի հաստատուն ծրագիր, որին հետևեց ինքը ամբողջ քսան տարի, մինչև իր կեանքի վերջը, իսկ նրանից յետոյ՝ ներկայ խմբագրական կազմը։ Այդ ծրագիրն էր՝ ղեկավարել հայ հասարական միտքը առաջադիմական ուղղութեամբ, սերմանել ժամանակակից գաղափարներ, որոնցով միայն հայ ժողովուրդը պիտի կարողանայ տեղ գրաւել և ապրել առաջադէմ ազգերի շարքում։

Չը նայելով բազմատեսակ ներքին և արտաքին խոչընդոտներին և աննպաստ պայմաններին, որոնց մէջ ապրում և գործում է հայ լրագրութիւնը, «Մշակը» միայն եղաւ ռուսահայոց բազմաթիւ լրագիրների մէջ, որ կարողացաւ այսքան երկար տարիներ իր գոյութիւնը պահպանել, առանց իր ծրագրից շեղվելու։ Այս անուրանալի իրողութիւնը անհերքելի ապացոյց է, որ «Մշակը» եղել է այն լրագիրը, որ ճիշդ կերպով ըմբռնել է հայ հասարակութեան իսկական կարիքները, հաւատարմութեամբ ծառայել է նրանց և ուղիղ է տարել հասարակական մտքի ղեկը, առանց տատանվելու, առանց սառեցնող հովմերից ընդարմանալու, առանց փոթորիկներից խորտակվելու։

Գնահատել այն առողջամիտ, հասարակութեան ճշմարիտ շահերին համապատասխան, հեռատես ուղղութիւնը, որ բռնել է «Մշակը» ամենակարևոր ազգային խնդիրների քննութեան ժամանակ. թէև այն բարոյական և նիւթական օգնութիւնները, որ ցոյց է տուել նա կրթական, բարեգործական հիմնարկութիւններին, ժողովրդական խոշոր աղէտների — սովի, հրկիզութեան, կոտորածների—ժամանակ՝ անհնարին է մի թռուցիկ տեսութեան մէջ։ Սրա համար պէտք կը լինէր վերայիշել հայոց պատմութեան վերջին տագնապալից, երկունքով բռնված, յոյսերով և յուսախաբութեամբ լի քառասնամեակը։ Այդ պատմութիւնը վկայում է, որ «Մշակը» միշտ ապրել է ժողովրդի համար, ցաւակից է եղել նրա ցաւերին, խնդակից՝ նրա ուրախութիւններին, բայց միշտ գիտակից այն ծանր պատասխանատուութեան, որ կրում էր ինքը՝ իբրև ղեկավար հասարակութեան։

Եւ այժմ, երբ արդէն բոլորեց իր կեանքի ու գործունէութեան քառասնամեակը, ժամանակն է, որ հայ հասարակութիւնը տօնէ իր աւագագոյն լրագրի, իր կենսական շահերի պաշտպան հաւատարիմ մշակի այս հազուադէպ յոբելեանը, խօսքով ու գործով արտայայտէ իր յարգանքն ու համակրութիւնը դէպի այս լրագիրը և նրա ազնիւ ու չարքաշ գործունէութիւնը։

Ներքոյ ստորագրեալներս, որ մեր վրա նախաձեռնութիւն ենք վերցրել կազմակերպելու «Մշակ» լրագրի քառասնամեայ գոյութեան յոբելեանը, սրանով դիմում ենք «Մշակի» բազմաթիւ բարեկամներին ու համակրողներին, դիմում ենք ամբողջ հայ հասարակութեանը, Ռուսաստանում և այլ տեղեր, հրաւիրելով մասնակցել այս յոբելեանին, որ ոչ միայն «Մշակի» տօնն է, այլ և նրան սիրող ու պահպանող գիտակից հայ հասարակութեան։ Յանձնաժողովս սիրում է յուսալ, թէ ինքը հասարակութեան ջերմ բաղձանքներին թարգման է հանդիսանում, յայտնելով որ այս յոբելեանի առիթով եղած և լինելի յօժարակամ նուէրներին պէտք է տալ առանձին կազմակերպութիւն, որի նպատակը լինի ապահովել «Մշակի» յարատև հրատարակութիւնը, միաժամանակ միջոց տալով նրան զարգանալու ներքուստ և արտաքուստ, ընդարձակելու ծրագիրը և այլն։

Յանձնաժողովս համոզված է, որ հայ հասարակութիւնը իր միահամուռ համակրութեան այսպիսի արտայայտութեամբ աւելի ևս ույժ կը տայ այն անկախ ու անվեհեր գործունէութեան, որ ունեցել է «Մշակը» քառասուն տարի շարունակ։

Յանձնաժողովս լիայոյս է, որ հայ հասարակութիւնը համակրութեամբ կընդունէ իր այս առաջարկութիւնը և յօժարակամ նուէրներով կը նպաստէ նրա իրագործմանը։

Յոբելեանական տօնը կատարվելու է ներկայ տարվայ մայիսի 26-ին, շաբաթ օրը։

Յոբելեանին վերաբերեալ գրագրութիւններն ու դիմումները ուղղելու է Յանձնաժողովիս Բիւրոյի Նախագահ Յովհաննէս Սպէնդիարեանին (Ивану Семеновичу Спендіарову, Евангуловская, 8, Тифлисъ). իսկ դրամական առաքումներն ուղղելու է Յանձնաժողովիս փոխ-նախագահ Արշակ Միլեանին (Аркадію Назаровичу Милову, Тифлисъ).

Նախագահ Յանձնաժողովի՝ Գաբրիէլ Սունդուկեան (դրամատուրգ), Փոխ-նախագահներ՝ Յովհ. Սպէնդիարեան (երդուեալ-հաւատարմ.), Արշակ Միլեան (Թիֆլ. վաճառ. աւագ և բորս. կոմիտ. նախագահ), Բագրատ Նաւասարդեան (բժշկապետ)։ Քարտուղար յանձնաժողովի՝ Ստեփան Մալխասեանց (տեսուչ Յովնանեան դպրոցի)։ Պատւաւոր անդամ՝ Յովհաննէս Գասպարեան բժշկապետ)։

Անդամներ՝ Ալիխանեան Յովհ. (իրաւագէտ և նախկ. հաշտ. դատաւոր), Աթաբէգեան Միք. (երդ.-հաւատարմ.), Առաքելեան Բարսեղ (մէշչաններին աւագ), Աւան-Իւզբաշեան Դաւիթ (կալուածատէր), Աֆրիկեան Խաչատուր (առևտրական), Աւետիսեան Հայրապետ (առևտրական), Աղաջանեան Միք. (բժշկապետ), Բաղդասարեան Արամ (առևտր.), Բաշինջաղեան Գէորգ (նկարիչ), Բաբեան Արշակ (ինժենէր), Եաբալեան Գրիգոր (ինժենէր), Եզեկեան Աւետիք (գրականագէտ), Էնֆիաճեան Արտաշէս (գործարանատէր), Ծատուրեան Եփրեմ (առևտր.), Խաչատրեան Խաչատուր (խմբագիր «Тифл. Лист.» լրագրի), Խարազեան Սարգիս, Խունունց Մնացական (նաւթարդիւնաբերող), Կիւլպէնկեան Սերովբէ (Կիւլպենկ. Առևտր. Տան պետ), Կիրակոսեան Գր. (ինժ.), Ղորղանեան Յովս. (երդ.-հաւատարմ.), Մանթաշեան Լևոն (Մանթաշեան Արդիւնաբ. Տան պետ), Մամուլեան Զաք. (II փոխ. վարկի ընկ. դիրեկտոր), Մանուէլեան Ստեփան (հաշուապահ. կուրսերի տեսուչ), Մայսուրեան Սամսոն (բժշկ.), Մարտիրոսեան Մնացական (տպարանատէր), Մելքումեան Սարգիս (II փոխ. վարկի ընկ. դիրեկտոր), Նախշունեան Գր. (առևտր.), Նազարեան Տիգ. (խմբագ. «Աղբիւր-Տարազ» հանդէսների), Շահպարոնեան Սամուէլ (բժշկ.), Շխեան Արտ. (բժշկ.), Ջաղէթեան Ալէքսանդր (արդիւնաբ.), Ստեփանեան Կարապետ (բժշկական-առողջապահ. վերատեսուչ Թիֆլիս քաղաքի), Սարուխանեան Առաքել (գրականագէտ, դիրեկտոր Մանթաշեան Արդիւնաբ. Տան), Սուլխանեան Ստ. (ռուսական շոգենաւ. և առևտ. ընկ. գլխաւոր գործակալ Թիֆլիսում), Սուլխանեան Մինաս (առևտ.), Սերովբեան Կար. (արհեստաւորների աւագ), Ստեփանեան Ալէքսանդր (Սանդրօ), Քալանթարեան Պետ. (երդւ.-հաւատ.), Յովսէփեան Յովսէփ (առևտր.), Փիրալեան Յարութիւն (գիւղատնտ. և պետական տնտեսագործ. կոմիտէտի կառավ.)։

—

Կրասնովոդսկ, 18 մարտի

Թոյլ տուէք հրապարակով ձեր թերթի միջոցով յայտնել իմ սրտագին շնորհակալութիւններն այն հաստատութիւններին և հոգևոր ու աշխարհական անձերին, որոնք՝ ուսուցչութեան երեսնամեայ ասպարէզս լրացնելու առիթով շնորհաւորութեան հեռագիրներ, թղթեր էին ուղարկել կամ ուղերձներով անձամբ ներկայացել։

Յայտնում եմ նաև իմ խորին շնորհակալութիւնները իմ ընկեր ուսուցիչ-ուսուցչուհիներին, որոնք նախաձեռնողը եղան իմ չարքաշ կեանքի երեսնամեայ հանդէսին։

Վահան ա.-ք. Տէր-Գրիգորեան

Ծանօթ. խմբ.—Կրասնովոդսկի ծխ. դպ. ուսուցչ. խմբի կողմից աւ.-ուսուցիչ պ. Վ. Աֆրիկեանի նամակին, որ տպվեց «Մշակի» № 45-ում («Նամակ խմբագրութեան» բաժնում) որպէս արձագանք մենք ստացանք մի քանի ուղերձ-նամակներ՝ «Մշակում» տպելու համար, բայց որովհետև այդ գրութիւնները մարտի 18-ից ուշ հասան մեր ձեռքը, այդ պատճառով աւելորդ համարեցինք տպագրութեան յանձնել։ Յիշեալ գրութիւններից յիշատակելի են 1) Կօկանդից Ջ.-Էճի ուղերձը և 2) Նամանգանից Գարեգին Մնացականեանցի նամակը։

—

Վերին-Ագուլիս, 23 մարտի

Սրանով յայտնում եմ Գողթան շրջանի հայոց եկեղեցական-ծխ. դպրոցների ընկեր ուսուցիչ-ուսուցչուհիներին, որ պատշաճաւոր իշխանութիւնից մերժում ստանալու պատճառով՝ այլևս չի կայանայ մեր շրջանի այն ուսուցչական ժողովը, որի մասին յայտարարված էր թերթերում։

Աւագ ուս. Վերին-Ագուլիսի
Հայոց եկ.-ծխ. դպրոցի՝
Ց. Տէր-Յակովբեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետերբուրգում աշխատաւորականների կօնֆէրէնցիան ընդունեց ընտրողական արմատական պլատֆորմա։ Որոշված է բլօկ կազմել նախ սօց.-դեմօկրատների, ապա կադետների և առաջադիմականների հետ։

◆ «Դաշնակցութեան» գործի մէջ երեան հանված խարդախութիւնների քննութիւնը կաւարտվի ապրիլ 10-ին։ Այդ գործի առիթով հարց է յարուցված վերակազմել առհասարակ քաղաքական խնդիրների նախնական քննութիւնը։

◆ Պետերբուրգ են եկել Բալֆուրը և Չեմբէրլէնը առևտրական գործերով։

◆ Վերջին վիճակագրութեան համաձայն, Մոսկվայի ազգաբնակութեան թիւն է 1.615,923 շունչ, աւելի քան Պետերբուրգում։ Մոսկվան 8-րդ տեղն է գրաւում աշխարհի մեծ քաղաքների մէջ։ Եթէ ազգաբնակութեան ամենամեայ այդօրինակ աճումը շարունակվի, այն ժամանակ Մոսկվան շուտով իր բնակիչների թւով կանցնէ Բեռլինից։

◆ Կիէվում, բանտարկութեան ժամանակը դեռ չը լրացած, ազատ արձակվեց Կիէվի խուզարկու ոստիկանութեան նախկին պետ Ասլանովը։

◆ Նիցցայում Հերցէնի ծննդեան տարելիցին նրա գերեզմանի մօտ ժողովվեցին աւելի քան 300 ռուս գաղթականներ, քաղաքական գործիչներ, գրողներ և ուսումնականներ։ Գեղեցիկ ճառ արտասանեց Պլէխանովը։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Թէհրանից, որ այնտեղ ստացված տեղեկութիւնների համաձայն Սալար-ուդ-Դովլէն Քիրմանշահում յարձակվել է ռուսական հիւպատոսարանի վրա։ Որովհետև հեռագիրը չէ գործում, այդ տեղեկութեան ճշդութիւնը չէ կարելի առ այժմ ստուգել։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ ռուսական սահմանագլխի վրա սպանվել են Էրզրումի վիլայէթի 4 թիւրք զինւոր, որոնք կամեցել են Կարս անցնել։

◆ Իտալական «Աւանդի» լրագրի ասելով, Տրիպոլիսում ապստամբվել են իտալական գնդերից մի քանիսը, պահանջելով հայրենիք վերադարձնել։

◆ Թունիսի բնակիչները զէնք ու ռազմամթերք են մատակարարում արաբ և թիւրք զինւորներին։

◆ Խօրասանի գեներալ-նահանգապետ նշանակվեց Նայբ-Դովլէն։

◆ Լուրերի համաձայն՝ Թէհրանի ռուսաց գեներալ-հիւպատոս Պօխիտօնովը յետ է կանչվում Պարսկաստանից։

◆ Պէկինում ձերբակալվեցին 30 դաւադիրներ, որոնք պատրաստվում էին սպանել Իւանշիկային, Սունեատսէնին և Խուանսինին։

◆ Ասում են, որ Իւանշիկայը պատրաստում է 100 միլիոն լիէնի ներքին փոխառութիւն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

29 մարտի

ԱԹԵՆՔ։ Յոբելեանական հանդէսների առիթով հելլէնական համալսարանը 90 օտարազգիների ընտրեց պատուաւոր դոկտորներ, որոնց թւումն են Կ. Պոլսի, Երուսաղէմի, Ալէքսանդրիայի և Անտիոքի ուղղափառ պատրիարքները, ռուս պրոֆէսորներ Բենէշեվիչը, Զելինսկին (Պետերբուրգ) և Կունցը (Ռիգա)։

ՆԻԿՈԼԱՅԵՎ։ Նաւագնացութիւնը կանգ է առել։ Փոթորիկը շարունակվում է։ Ուրագանի պատճառած վնասը 100,000 ռուբլի է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վախճանվեց կանանց բժշկական ինստիտուտի պրոֆ. Սադովսկին։

Այսօր վախճանվեց անասնաբուժական վարչութեան կառավարիչ Նազորսկին։

Շտուտգարդում վախճանվել է Մեծ Իշխանուհի Վէրա Կօնստանտինօվնան, որի յիշատակին այսօր Մեծ Իշխան Կօնստանտին Կօնստանտինովիչի պալատում կատարվեց հոգեհանգիստ։

ԹԱՒՐԻԶ։ Երէկ գիշեր շրջակայքում սառցատար եղան 6 մարդ։

ԿԻԵՎ։ Դնէպրի ջուրը ծածկել է Տրուխանով կղզին. Նիկօլսկայա և Սլոբոդսկայա փողոցներում հարիւրաւոր տներ մնացել են ջրի տակ։ Հաղորդակցութիւնը կատարվում է նաւակներով։ Լուրջ կերպով վնասված են նաև Կիէվի շրջակայ տեղերը։

ՆՈՐ-ԲՈՒԽԱՐԱ։ Հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը մեկնեց Բայրամ-Ալի։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Օկա գետը բարձրացել է 5 արշին։

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ։ Բժշկա-տեխնիքական կոմիտէտը Պետական Դումայի անդամ Լիսիցկինի, պրոֆ. Լեբեդեվի, Եսէնտուկի բժիշկների և գեներալ Լագվագէնի մասնակցութեամբ նոր բացված աղբիւրը անուանեց «Источникъ № 17, Коренная струя». Առաջիկայ սէզոնին բացվելու է բուֆէտ։

ԿԻԵՎ։ Բացվեց Կիէվի նահանգի ռուս ժողովրդի միութեան քաղաքային ու շրջանական բաժինների ներկայացուցիչների համագումարը։ Եկել են մօտ 200 մարդ։ Որոշվեց ուղարկել ամենահպատակ զգացմունքների հեռագիր Կայսրի անունով։ Հեռագիրներ ուղարկվեցին նաև միտրոպոլիտ Ֆլաւիանին և ռուս ժողովրդի միութեան գլխաւոր խորհրդին։

ՄՈՍԿՎԱ։ Բացվեց ֆէլդշէրների և ֆէլդշէրուհիների համագումարը։

ՕԴԵՍՍԱ։ Բացվեց համառուսական ազգային միութեան բաժանմունքը։ Ուղարկվեց ամենահպատակ հեռագիր Կայսրին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

---

*) Մի քանի պատճառներից ստիպված՝ խմբագրութիւնս յետաձգեց Յանձնաժողովի այս գրութեան տպագրութիւնը։



№ 4711. Ճարպային շպարը
ՏԱԼԻՍ Է ԸՆԴՄԻՇՏ ԹԱՐՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆ։ Գնելուց՝ ուշադրութիւն դարձնել, որպէսզի տան ձեզ «№ 4711 ճարպային շպարը»։ № 4711-ը օրէնքով հաստատված է։
ՖԵՐԴ. ՄԻՒԼԳԵՆՍ Գար ֆիւմերիա № 4711.
ԿԵՕԼՆ Ռ./Վ. և ՌԻԳԱ։ Մատակ. Ն. Մ. Ռ. Բ. Դուան։
(M. 28759/28782) 3—3

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

ձեռնարկելով **Գեղարուեստ. և Գիտական Ժողովածուներ** հրատարակելու

յայտնում է ի գիտութիւն երիտասարդ գրողների, որ խմբագրական մարմինը ընդունում է նիւթեր մինչև մայիսի 1-ը և սեպտ. 1-ից։

Ժողովածուների մէջ գլխաւոր տեղը տրվելու է ուսանող և ոչ-ուսանող սկսնակներին։

Առաջին Ժողովածուն լոյս կը տեսնի այս տարվայ աշնանը։

Նիւթերը ուղարկել հետևեալ հասցէով՝ С.-Петербургъ, Психо-Неврологическій Институтъ. Студ. Геворку Месяну.

(Ե.) 204. 2—1

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ձմերային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I Փոստային-մարդատար շոգենաւերը.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւերը.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւերը.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, բիօլեթազայի, Մակդոնիայի, Սերբիայի, Անատոլիայի-Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Րիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելյամինօվսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են և ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(շ.) 0—42

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՈՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—30

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագէտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտօվսկայա, № 66.
(շ.ե.) 130. 100—84

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ◆
ԼՈՒՍԱՆԿԱՐ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ մօտ հանգուցեալ դրամատուրգ
Գաբրիէլ Սունդուկեանի պատկերը
խնամքով պատրաստված, հատը 20 կ.-ից մինչև 3 ռուբլի արժողութեամբ։ Նոյն տեղը վաճառվում են բոլոր հայ գրողների և գործիչների պատկերները, մասնաւոր բացառութեամբ։ Դիմել՝ Тифлисъ, Николаевскій мостъ, фотографію Теръ-Гевондянц
(օ. մ.) 206. 3—1

ՄԵԿՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԾԱԽՎՈՒՄ Է
Պեսկօվսկայա փողոցի վրա, № 3, Ալէլովի տանը, Առևտրական Դպրոցի դիմաց,
ՄԻ ԹԷՅԱՏՈՒՆ
Հարցնել նոյն տեղը Նիկողայոս Վարդաևվին
(Կ.) 201. 2—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
Բ., Տ. և Ն. ՎԱՐԴԱՆԵԱՆՆԵՐԸ
յայտնում են ցանկացողներին, որոնք կը կամենան կապալով վերցնել Կախէտինսկոյա հրապարակի և Պրէօբրաժենսկի տուպիկի անկիւնում գտնվող տան քանդումը, պայմանների մասին դիմել Վարդանեանների խանութը, որ գտնվում է Անանովի քարվանսարայում, № 46.
(Կ.) 203. 2—1

◆ ՀԱՐԿԱՒՈՐ Է ◆
Աստրախանի «ՄԵՐ ԿԵԱՆՔԸ» թերթի համ
ՄԻ ՀՄՈՒՏ ԳՐԱՇԱՐ
ամսական 50 ռուբլի ռոճիկով։
Դիմել՝ Астрахань, ред. „Мерь Кянкъ", А. Апресяну, կամ թէ դիմել «Մշակի» գրասենեակը։
(Կ.) 208. 2—1

ՆՈՐ ԳԻՐՔ
Լոյս տեսաւ և վաճառվում է
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
I հատոր. Հրատ. „ՊԱՆԹԷՕՆԻ"
Գինն է 1 ռուբ.
Դիմել գրավաճառներին կամ Москва,
ружейный пер. д. Ганшина, кв. 15.
Макинціану.
(օ. մ.) 148. 10—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՏՆԵ
Նիկօլաեվսկայա փողոցի վրա՝ № 37, Տուրգենեվսկայ վրա՝ № 5 փող. վրա՝ № 2 և 4, Աւճալսկայա փող. վրա՝ № 3։ Ծախվում են նա Պեսկօվսկայա փող. վրա՝ № 3։ ԿԱԼՎԱԾՆԵՐ—Մետեխում և Արմեանսկի բազա մօտ, ԱՅԳԻ—Կասպի կայարանի մօտ, և 10 ԴԵՍ ՀՈՂ ու ՄԻ ՏՈՒՆ—Կոջորում։ Ամեն օր դի առաւ. ժամը 9—12-ը „Օրիանտ" հիւրանոցը № 1
(օ.մ.) 147. 10—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.